ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ,ք.Կապան Շահումյան 20/32, 3301:
Հեռ. (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200: գինը՝ 100 դրամ

ISSN 1829-3468

ՈՒՐԲԱԹ, 13 ՀՈՒԼԻՍԻ 2018Թ.
№ 18 (476)

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

Ինչ լավ է, որ քաղաքականությունը նույնպես... պատժում է իրեն աղարտողներին:

Հրանտ Մաթեւոսյան

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը Սյունիք

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով հուլիսի 5-ին ժամանել է Սյունիքի մարզ

Սյունիքի մարզ կատարած իր այցի ընթացքում նա հանդիպեց Սիսիանի հրապարակում հավաքված բնակիչների հետ, լսեց նրանց հարցերը եւ վստահեցրեց ընթացք տալ դրանց լուծմանը: Նիկոլ Փաշինյանը նախ շնորհակալություն հայտնեց ջերմ ընդունելության համար: Պաշտոնյան նշեց, որ իրեն մեղավոր է զգում, որ քայլարշավի ժամանակ Սյունիքը չի ներառվել իր երթուղում, բայց դա ունի իր օբյեկտիվ հիմքերը. **«Եթե այստեղից սկսեինք, երեւի հիմա նոր Երեւան կհասնեինք»**,- կատակեց վարչապետը: **«Մեր այցի նպատակը ձեր առջեւ արձանագրելն է, որ ձեռք բերված հաղթանակը ձեզանից յուրաքանչյուրին է: Մեր խնդիրն է, որ հաղթանակածի զգացողությունը պահպանվի ոչ թե մեկ ամիս, մեկ տարի, այլ մշտական լինի»,-** «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ ասաց Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետն անդրադարձավ բնակիչների բարձրացրած տարաբնույթ հարցերին, որոնք ինչպես անձնական, այնպես էլ հասարակական նշանակության էին: Սիսիանի պատմության թանգարանի աշխատակից Աննա Ռուբենյանն իր մտահոգությունն արտահայտեց այն առնչությամբ, որ Բռնակոթ համայնքում կա երկու գետ, որոնցով աշխատեցնում են միայն հիդրոէլեկտրակայաններ, իսկ գյուղացու ամբողջ բերքը չորացել է: **«Խնդրում եմ այդ հարցին լուծում տալ: Սիսիանում եւս կա այդ խնդիրը»,-**ասաց Աննա Ռուբենյանը: Նիկոլ Փաշինյանն ի պատասխան նշեց, որ շատ հարցերի դեպքում ինքը բարձրացված խնդիրներն ընդունելու է որպես ի գիտություն, դրանք ուսումնասիրվելու են ու, եթե լինեն քաղաքացիների իրավունքների խախտումներ, դրանք շուտափույթ լուծում կստանան:

Դարպասի բնակիչ Սենիկ Միքայելյանն էլ հարց բարձրացրեց համայնքների խոշորացման վերաբերյալ՝ նշելով, որ առանց համայնքների ձայնը լսելու 32 գյուղ են միավորել մի համայնքում: **«Պարոն Փաշինյան, խնդրում եմ հարց տաք, թե ով էր համաձայն այդ գործընթացին ու համայնքների խոշորացման ծրագիրն ինչ**

էջ 4

Մեկնարկեց ամառային զորակոչը

Մարզկենտրոն Կապանում հուլիս 8-ին մեկնարկեց հայոց ազգային բանակի ամառային թարմացման գործընթացը: Զինվորացու տղաները գնացին փոխարինելու սահմանադրական պարտքը կատարած իրենց ավագ ընկերներին: Առաջին անգամ զորակոչն իրականացրեց Սյունիքի մարզի զինկոմիսարիատը: Զորակոչի անդրանիկ հավաքն ավանդույթի համաձայն մեկնարկեց Գարեգին Նժդեհի հուշահամալիրից, իսկ մինչ այդ հայրենիքի ապագա պաշտպաններին Կապանի Սուրբ Մեսրոպ Մաշտոց եկեղեցում հայրենիքին արժանապատվորեն ծառայելու օրհնանքներ եւ մաղթանքներ հղեց Կապանի հոգեւոր հովիվ տեր Վահան քահանա Հեբոյանը:

«Խաղաղությամբ ծառայեք եւ վերադառնաք ձեր օջախները: Եղեք համբերատար եւ հարգալից բոլորի նկատմամբ, սիրեք մեկմեկու, դուք թանկ եք մեզանից յուրաքանչյուրի համար: Դուք գնում եք պաշտպանեու Ձեր հայրենիքը, ձեր մայրերի, քույրերի, եղբայրների խաղաղությունը: Որպես ժողովուրդ մենք խաղաղասեր ենք եւ որեւէ մեկի ունեցվածքի վրա աչք չենք դրել: Սակայն չպետք է կորցնենք մեր զգոնությունը, եւ միշտ պատրաստ լինենք թշնամուն հակահարված տալ: Իսկ դրա համար, առաջին հերթին, պիտի ունենանք ուժեղ եւ միասնական բանակ: Ուժեղ բանակ, նախեւառաջ մտքով, ոգով, հավատքով եւ բազկով»,- պատգամեց հոգեւոր հովիվը: Իսկ հուշահամալիրում արդեն հնչում էին ազգային- հայրենասիրական երգեր, զինակոչիկների հարազատներն ու մտերիմները սպասում էին միջոցառումը սկսելուն: Զորակոչի անդրանիկ հավաքին մասնակցում էին մարզային եւ համայնքային իշխանությունների ներկայացուցիչներ, Արցախյան գոյամարտի մասնակիցներ, զինվորականներ, տարբեր զբաղմունքի եւ տարիքի մարդիկ:

Ապագա զինվորները նախ ծաղիկներ խոնարհեցին հայ ազգի նվիրյալ Գարեգին Նժդեհի հուշարձանին, այնուհետեւ Սյունիքի զինկոմիսարիատի զորահավաքային բաժնի պետ,

էջ 7

Գորիսը՝ ԱՊՀ երկրների մշակութային մայրաքաղաք

Համագործակցության «մշակութային մայրաքաղաքներ» միջպետական ծրագրի կանոնակարգով Հայաստանը 2016 թվականի դեկտեմբերին ԱՊՀ գործադիր կոմիտեին առաջարկություն էր ներկայացրել՝ Սյունիքի մարզի Գորիս համայնքը 2018 թվականի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք հայտարարելու վերաբերյալ:

Հայաստանի արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը 2017 թվականի ապրիլի 7-ին Տաշքենդում մասնակցել եւ ելույթ է ունեցել ԱՊՀ ԱԳ նախարարների խորհրդի նիստին:

Հենց այդ օրն արտգործնախարարների խորհուրդը որոշել է հավանություն տալ Հայաստանի Գորիս քաղաքը եւ որպես 2018 թվականին ԱՊՀ մշակութային մայրաքաղաք հռչակելու մասին որոշման նախագծին:

***

Երեւան-Գորիս մայրուղու մուտքը խորհրդանշող «Ձանգեր» հուշարձանը նոր շունչ հաղորդեց Գորիսին:

Հուշարձանի բացմամբ հուլիսի 7-ին Գորիսում տրվեց «Գորիսը ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» միջոցառումների մեկնարկը:

«Գորիսի ընտրությունը պայմանավորված է դրա հետաքրքիր ճարտարապետությամբ եւ կոլորիտով: Այս օրերին Գորիս են այցելել ԱՊՀ ութ երկրից ավելի քան 150 արվեստի գործիչներ, պաշտոնատար անձինք»,- «Արմենպրես»-ի հաղորդմամբ նշեց ՀՀ մշակույթի նախարար Լիլիթ Մակունցը:

Գորիս համայնքի ղեկավարի տեղակալ Մենուա Հովսեփյանը շեշտեց, որ Գորիսն այն քաղաքն է, որն ունի հարուստ ավանդույթներ եւ պատմությանը տվել է տաղանդավոր գրողներ, երգահաններ եւ այսօր էլ գորիսեցիները շարունակում են ստեղծագործել, լինել հոգեւոր ու մշակութային ժառանգության կրողն ու շարունակողը:

«Այս կառույցն ամբողջացնում է

էջ 2

Գորիսը՝ ԱՊՀ երկրների մշակութային մայրաքաղաք

էջ 1

ժայռերի քաղաքի կոլորիտը: Կառույցի առանձնահատկությունն այն է, որ համայնքի եւ Գորիսի համայնքապետարանի համատեղ ջանքերով ու ներդրումներով են իրականացվել վերակառուցման աշխատանքները»,-ընդգծեց Հովսեփյանը:

Կառույցի ճարտարապետ Սեւադա Զաքարյանը պատմեց, որ «Զանգերը» վերակառուցելու միտքն առաջացել է անցյալ տարվա դեկտեմբերին, աշխատանքները մեկնարկել են ձմռանը, բայց, իմանալով, որ Գորիսը հռչակվել է ԱՊՀ երկրների մայրաքաղաք, արել են ամեն հնարավորը՝ աշխատանքները ժամանակին ավարտելու համար: Քարերը Իշխանասարի փեշերից են բերվել: **«Կառույցի դիմաց գտնվող սարի վրա կա դիտակետ, որը դեռ պետք է կառուցել եւ, հավանաբար, մինչեւ աշուն ավարտին հասցնել: Սա ոչ միայն Արցախ-Սյունիք մայրուղու վրա կառուցված խորհրդանիշ է, այլեւ հանգստի գոտի»**,-եզրափակեց ճարտարապետը:

***

Գորիսը 2018 թվականի ԱՊՀ երկրների մայրաքաղաք հռչակվելու միջոցառումների շրջանակում Գորիսի Գ. Տաթեւացու անվան հրապարակում անցկացվեց «ArtExpo» ծրագիրը: Պաշտոնական բացումը տեղի ունեցավ հուլիսի 7-ին: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ «ArtExpo»-ում ներկայացված տաղավարներում ցուցադրվեցին ձեռագործ աշխատանքներ, գեղանկարներ, կարպետներ, տարբեր բույսեր:

ՀՀ մշակույթի նախարարի տեղակալ Նազենի Ղարիբյանի խոսքով, ծրագրի նպատակը ցուցահանդես-տոնավաճառի մասնակիցներին միմյանց աշխատանքներին ծանոթացնելն ու հետագա համագործակցության համար հարթակ ստեղծելն է: Փոխնախարարն ընդգծեց, որ շրջել է բոլոր տաղավարներում: Դրանցից յուրաքանչյուրն, ըստ նրա, իր յուրահատկությունն ունի. **«Մենք ցանկացել ենք այստեղ ապահովել ԱՊՀ տարբեր երկրների ներկայացվածությունը եւ գորիսեցիներին ծանոթացնել այդ երկրների մշակույթի հետ»**,-ընդգծեց Ղարիբյանը:

Երեւան քաղաքը ներկայացնող տաղավարում ցուցադրված էին տարբեր բուսատեսակներ, տաղավարի պատասխանատուները նպատակ են ունեցել տեղացիներին եւ հյուրերին ցույց տալ, որ Հայաստանը դրախտ է: Տաղավարի համադրող Գայանե Դավթյանը նշեց, որ բույսերը ցուցահանդեսի ավարտից հետո բաժանելու են այցելուներին:

Գեղարքունիքի մարզը ներկայացնող տաղավարը, որտեղ ցուցադրված էին Գավառի արվեստի քոլեջի ուսանողների աշխատանքները եւ հնագույն կարպետներ, մեծ հետաքրքրություն էր առաջացրել ԱՊՀ երկրների հյուրերի շրջանում: «Ռուսաստանի եւ Մոլդովայի ներկայացուցիչների հրավերով առաջիկայում Քիշնեւում կմասնակցենք կարպետների միջազգային ցուցահանդեսին: Մենք ներկայացնելու շատ բան ունենք, սակայն այդ ամենը չենք կարող ցուցադրել այս երկու օրվա ընթացքում»,-շեշտեց Գավառի արվեստի քոլեջի ներկայացուցիչ Հակոբջան Բիծյանը:

***

«Թթի փառատոնն» իր շուրջ էր համախմբել Սյունիքի մարզի տարբեր համայնքների ներկայացուցիչների: Վերջիններիս խմիչքների, Սյունյաց աշխարհի ուտեստների, հետաքրքիր ձեռագործ աշխատանքների եւ այլ գործերի ցուցադրությամբ գրավեցին ոչ միայն հայ, այլեւ օտարազգի զբոսաշրջիկների ուշադրությունը: Փառատոնն անցկացվեց հուլիսի 7-ին հայկական լեռնաշխարհի ամենագեղեցիկ քաղաքներից մեկում՝ Գորիսում:

«Փառատոնն այս տարի համընկավ «Գորիսը ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» հռչակելու հետ, եւ մենք շատ ենք ցանկանում զբոսաշրջիկներին ցույց տալ, թե թթից ինչ է հնարավոր ստանալ՝ չիր, դոշաբ, օղի: Ցանկանում ենք փառատոնի միջոցով նպաստել Գորիսի աշխուժացմանը, ակտիվացմանն ու զարգացմանը»,-«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ նշեց միջոցառման հաղորդավար Գրիգը:

Զբոսաշրջիկներից մեկն ասաց, որ տարբեր երկրներում մասնակցել է մի շարք ուշագրավ փառատոների, սակայն այն ջերմությունն ու միասնականությունը, որը կա թթի փառատոնում, ոչ մի տեղ չի տեսել: Փառատոնին կազմակերպվեց ինտերակտիվ պարային շոու, անցկացվեց թուք թափ տալու մրցույթ, եւ հաղթողները մրցանակների արժանացան: Փառատոնին ներկաները հնարավորություն ունեցան վայելել թթի օղու, դոշաբի, Սյունյաց աշխարհին հատուկ ուտեստները: Միջոցառման ընթացքում ելույթներ ունեցան տեղի տաղանդաշատ պարային համույթները, երգչախմբերն ու թատերախմբերը: Հայրենասիրական երգերի կատարումներով ներկաներին բավականություն պատճառեց Երեւանից հրավիրված երգիչ Դավիթ Հակոբյանը:

Միջոցառումն անցկացվեց «Գորիսը՝ ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» միջոցառման շրջանակում:

***

«Գորիսն ԱՊՀ երկրների մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակում քաղաքը տեղացիներին եւ զբոսաշրջիկներին է ներկայանում բազմաբնույթ միջոցառումներով՝ հանրահռչակելով Սյունիքի հարուստ մշակութային ժառանգությունը: Այդ իրադարձությունների կարեւոր մասն է կազմում ավանդական ուտեստների հյուրասիրություն-փառատոնը, որն անցկացվեց հուլիսի 8-ին Ակսել Բակունցի տուն-թանգարանի բակում եւ դրա տարածքում:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ հյուրերին դիմավորեց թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանը, ով, ողջունելով ներկաներին, փաստեց, որ քաղաքին նվիրված տոնակատարությունը սկսվում է թանգարանից: **«Պետք է շեշտեմ, որ «Բակունցյան օրեր» տոնակատարությունների շրջանակում թանգարանի այգին համալրվել է մի քանի ծառաքանդակներով, որոնց հեղինակը նկարիչ, քանդակագործ Ժիրայր Մարտիրոսյանն է»**,-նշեց նա:

Թանգարանից դուրս գալով՝ միջոցառման մասնակիցները շրջեցին Գորիսի փողոցներով, որտեղ գորիսեցիների կողմից պատրաստված

ավանդական ուտեստներով ճոխ սեղանները սպասում էին նրանց:

«Մենք յուրահատուկ թթու ենք պատրաստում. օրինակ՝ այստեղ ներկայացնում ենք բոխու եւ շուշանի թթու: Մեր հյուրերն այս թթուները շատ են հավանում: Սիրում են նաեւ մեր մատուցած լոբին, տարբեր հատապտուղներից պատրաստված օղիները»,- ասաց Գենավարդ Պետրոսյանը: Ասյա Գասպարյանն էլ խոստովանեց, որ ջանք ու եռանդ չեն խնայել, որ իրենց պատրաստած ուտեստներն ամենահամեղն ու տարբերվողը լինեն: **«Մի քանի տեսակ աղցաններ եւ դանդուռով, սխտորով թթուներ ենք պատրաստել, իսկ սեղանի ամենաբնորոշ ուտեստը Գորիսի մեղրն ու թփով տոլման է»**,-հպարտորեն ներկայացրեց տիկին Ասյան:

Գորիսում ավանդույթ է պահպանել ավանդական ուտեստները: Իննսունամյա Գոհար Հասրաթյանը վստահեցրեց, որ երիտասարդ ընտանիքները շարունակում են պատրաստել այն ճաշատեսակները, որոնք ինքը եփել է երիտասարդ տարիներին:

***

Հին Գորիս՝ ձեռագործության փառատոնին եւ՛ հայ, եւ՛ արտասահմանցի զբոսաշրջիկները ծանոթացան բնական թելերով ստեղծված ձեռագործ աշխատանքների՝ կարպետներ, պայուսակներ, տիկնիկներ, որոնք բնութագրում էին Գորիսի հարուստ մշակույթն ու ավանդույթները:

Միջոցառումն անցկացվեց հուլիսի 8-ին «Գորիսը՝ ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակում:

«Ներկայացնում ենք «Բրդից կարպետ» եւ «Հելունագործ կենդանիների ու տիկնիկների» արհեստանոցների արտադրանքը: Տեղական բուրդը վերամշակում ենք, ստանում ենք էկոլոգիապես մաքուր բրդյա թել, որով պատրաստվում են տարբեր կենցաղային եւ կիրառական ապրանքներ՝ գուլպաներ, բարձեր, գործվածքներ եւ այլն: Երկու արհեստանոցներում էլ աշխատում են խոցելի խմբերի կանայք»,-«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ նշեց «Կանանց զարգացման ռեսուրս կենտրոն» հիմնադրամի ծրագրերի զարգացման ղեկավար Աննա Ալեքսանյանը:

«Այս պահին ես բուրդ եմ գգում եւ այն ճախարակով մանում: Փառատոնը մեզ հնարավորություն է տալիս զբոսաշրջիկներին ներկայացնել մեր ավանդույթները, մշակույթը: Նրանք տեսնում են մեր արժեքները, գնահատում են բնական միջոցներով ստեղծված ձեռագործ աշխատանքները»,- ասաց փառատոնի մասնակից Ալվարդ Շալունցը:

Փառատոնի շրջանակում Հին Գորիսի տարածքում, որտեղ եւ անցկացվեց միջոցառումը, Վ. Վաղարշյանի անվան դրամատիկական թատոնի դերասանները ներկայացրեցին «Կյորես» բեմադրությունը, որն արժանացավ բուռն ծափողջույնների:

***

Սեն Հովհաննիսյանի «Հին եւ նոր Գորիս» պատկերագիրքը թերթելիս հետաքրքրասերները կարող են ծանոթանալ Գորիսի պատմությանը, տեսարժան վայրերին, պատմամշակութային արժեքներին:

Ռուսերեն եւ անգլերեն լեզուներով գրքի շնորհանդեսն անցկացվեց հուլիսի 8-ին «Գորիսը ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակում:

«Պատկերագրքում ներառվել է քաղաքի ստեղծման պատմությունը, գորիսեցիների նիստուկացը, նրանց տարազը, արվեստը: Գորիսը ոչ միայն հայ, այլեւ համաշխարհային մշակույթի մեջ մեծ տեղ ունի: Ափսոսում եմ, որ քիչ է ուսումնասիրված. կան հրաշալի աշխատություններ, բայց իմ ուշադրությունը գրավեց մշակութային ժառանգությունը, որն առանձին գրքով չի հրատարակվել: Տպագրվել է 1000 օրինակ»,-«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ նշեց պատկերագրքի հեղինակ Սեն Հովհաննիսյանը:

Հայաստանի ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանի խոսքով, գիրքը վերցնելով, կարող ենք տեսնել, թե ինչով է հարուստ այս տարածաշրջանը: **«Շատ ուրախ ենք, որ այն լույս է տեսել եւ հույս ունենք, որ իր արժանի տեղը կգտնի բոլոր գրախանութներում»**,-ասաց նա:

Ակսել Բակունցի տուն-թանգարանի տնօրեն Վարդան Սարգսյանը պատմեց, որ վերջերս իրեն բախտ է վիճակվել ծանոթանալ Սեն Հովհաննիսյանի հետ: **«Նա այցելել էր Գորիս այս պատկերագիրքը կյանքի կոչելու համար: Նրա հետ շփումից պարզ դարձավ, որ Հովհաննիսյանը բազմաշնորհ եւ տաղանդավոր անձնավորություն է, նրա հետաքրքրությունների շրջանակը շատ մեծ է: Նա զբաղվում է եւ՛ քարտեզագրությամբ եւ ազգագրությամբ, եւ՛ հրատարակչական գործով»**,-շեշտեց նա:

Սարգսյանը հավելեց, որ այս կարեւոր աշխատանքում իրենց ուժերի սահմաններում փորձել են աջակցել նրան: **«Հովհաննիսյանը կարողացել է փայլուն արտացոլել Գորիսի պատմությունը հնագույն ժամանակներից մինչեւ մեր օրերը, Գորիսը, որը քաղաքակրթության հնագույն օջախներից է»**,-ընդգծեց նա:

***

«Գորիսը՝ ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակում հուլիսի 8-ին Գորիսի Գ. Տաթեւացու անվան հրապարակում ԱՊՀ երկրների էստրադային-ջազային երաժշտության փառատոն անցկացվեց: Այն նվիրվեց հանրահայտ խորհրդային դաշնակահար, դիրիժոր, երգահան Կոնստանտին Օրբելյանին:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ համերգային ծրագրի մեկնարկից առաջ խոսքով հանդես եկավ Գորիսի քույր քաղաք Վիեննի փոխքաղաքապետ Լեւոն Սաքունցը: Նա նշեց, որ Գորիսի մշակույթն ու պատմությունը յուրահատուկ են: **«Քաղաքի մշակութային կյանքը երբեք անկում չի ապրել, անգամ ամենասարսափելի ժամանակներում: Գորիսի մշակութային մայրաքաղաք լինելը միջազգային շնչառություն է տալիս դրան: Պետք է փաստեմ, որ Գորիսն արդեն 25 տարի համագործակցում է Վիեննի հետ: Մեզ կապում է երկու ժողովուրդների բարեկամությունը»**,-ասաց նա: Սաքունցը հայտնեց, որ իրենք մեծ սիրով են ամիսներ առաջ հյուրընկալել Գորիսի քաղաքապետ Առուշ Առուշանյանին, ով նոյեմբերին կրկին կայցելի Վիեն համագործակցության նոր պայմանագիր ստորագրելու համար:

«Մաղթում եմ, որ Գորիսը շարունակի զարգացում ապրել եւ վերականգնի այն փառքը, որն ուներ 19-րդ դարում, եւ, իմացեք, որ Վիեննը միշտ ձեր կողքին կլինի»,-շեշտեց նա եւ սեր խոստովանեց Գորիսին ու քաղաքի բնակիչներին:

Համերգային ծրագրի ընթացքում Հայաստանի պետական ջազ նվագախմբի կատարմամբ հնչեցին Առնո Բաբաջանյանի, Արամ Խաչատրյանի եւ արտասահմանյան հայտնի ջազ կոմպոզիտորների ստեղծագործություններ:

Նվագախումբը ղեկավարեց Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի գեղարվեստական ղեկավար եւ տնօրեն Կոնստանտին Օրբելյանը: Ելույթ ունեցան մենակատարներ Անահիտ Շահբազյանը, Գեւորգ Մարգարյանը, Սոնա Ռուբենյանը եւ այլք:

***

Գորիսը ԱՊՀ երկրների մշակութային մայրաքաղաք հռչակելու ծրագրի շրջանակում մեծանուն գրող Սերո Խանզադյանի՝ վերանորոգված տուն-թանգարանում հուլիսի 7-ին նոր ցուցադրություն բացվեց: Չնայած տուն-թանգարանն ունի ընդամենը տասը տարվա պատմություն, հասցրել է գրավել այցելուների ուշադրությունը նոր ցուցանմուշներով՝ լուսանկարներ, գրողի Երեւանի բնակարանից նմուշներ եւ այլն:

«Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ տուն-թանգարանի վարիչ Արմանուշ Բակունցն ասաց, որ 2008 թվականին թանգարանը գտնվում էր շատ անմխիթար վիճակում: **«Նույն թվականին էլ իշխանությունները որոշել են գրողի տունը պահպանել եւ այն վերածել թանգարանի: 2015 թվականին գրողի 100-ամյակի կապակցությամբ տարածքային զարգացման հիմնանորոգման ծրագրում ընդգրկվեց նաեւ մեր թանգարանը եւ մեկ տարի անց բարեկարգվեց»**,- փաստեց Բակունցը:

Բակունցի փոխանցմամբ, բացի տուն-թանգարանից բարեկարգվել է թանգարանի տարածքը: Անդրադառնալով Գորիսը ԱՊՀ երկրների մշակութային մայրաքաղաք հռչակելուն՝ Արմանուշ Բակունցը հավաստիացրեց, որ սա խթան կհանդիսանա, որ թանգարանն ավելի շատ այցելուներ ունենա: **«Թանգարանը կդառնա կամուրջ, անցյալի, ներկայի եւ ապագայի միջեւ: Քանի որ Խանզադյանի ստեղծագործական ընդգրկումները բազմազան են»**,- եզրափակեց տուն-թանգարանի վարիչը:

Հայաստանի գրողների միության Սյունիքի բաժանմունքի նախագահ Լեւոն Սահակյանը նշեց, որ Գորիսն այսօր պահպանում եւ շարունակում է գրական բոլոր ավանդույթները: Ըստ նրա՝ Գորիսը մշակութային քաղաք է համարվում ամբողջ տարի եւ այս պահին կան 100-ից ավելի ստեղծագործողներ, այդ հողից է սերել նաեւ Սերո Խանզադյանը: **«Տուն-թանգարանը գործում էր տարիներ շարունակ, չնայած ոչ այս ձեւաչափով: Այս պատերը մեզ համար շատ թանկ են: Այս տունը Գորիսում մեզ համար ձգող ուժ է հանդիսանում: Գրողին հանդիպել եմ մի քանի անգամ եւ շատ լավ հիշողություններ ունեմ»**,- ասաց Սահակյանը:

ԱՊՀ երկրների մշակութային մայրաքաղաքի տիտղոսի հանձնումը Գորիսին

Հուլիսի 7-ի երեկոյան ԱՊՀ երկրների մշակութային մայրաքաղաքի տիտղոսը հանձնվեց Գորիսին:

Մշակույթի նախարարն ընդունեց «Գորիսը՝ 2018-ի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագրի շրջանակում Հայաստան ժամանած հյուրերին

«Մեզ համար չափազանց կարեւոր է «Գորիսը՝ 2018-ի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» ծրագիրը, որին նախապատրաստվել ենք բծախնդրությամբ ու պատասխանատվության մեծ զգացումով: Համոզված եմ, որ ամեն ինչ անցնելու է շատ լավ, եւ ուրախ եմ, որ այդ առիթով Հայաստանում եք»,- ծրագրի շրջանակում կազմակերպված միջոցառումներին մասնակցելու նպատակով Հայաստան ժամանած ԱՊՀ երկրների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի ներկայացուցիչների հետ հանդիպմանն ասաց նախարար Լիլիթ Մակունցը:

Հյուրերի թվում հիմնադրամի համանախագահ, Ռուսաստանի նախագահի միջազգային եւ մշակութային համագործակցության գծով հատուկ ներկայացուցիչ Միխայիլ Շվիդկոյն էր:

Հայ-ռուսական մշակութային համագործակցությունն առավել խորացնելու, համատեղ նոր գաղափարներ իրականացնելու՝ Լիլիթ Մակունցի առաջարկին ի պատասխան Միխայիլ Շվիդկոյն արձագանքեց. **«Որքան էլ զարմանալի է, Ռուսաստանում անցկացվող հայկական մշակութային միջոցառումները միշտ էլ «հերիք չեն», որովհետեւ մենք ունենք հայկական մեծ համայնք ու այդ միջոցառումների պահանջարկը միշտ առկա է: Ես կարծում եմ, որ փոխադարձ հյուրախաղերը, ամենատարբեր ձեւաչափով միջոցառումները պետք է լինեն անընդհատ: Մոսկվայում կարելի է կազմակերպել հայկական ցուցահանդես՝ անգամ առանց Հայաստանից որեւէ ցուցանմուշ բերելու. ռուսաստանյան թանգարանների հայկական ցուցանմուշներով կարելի է հրաշալի ցուցադրություն կազմակերպել»:**

Ըստ Միխայիլ Շվիդկոյի՝ հրաշալի կլիներ Մոսկվայում կազմակերպել ցուցահանդես՝ նվիրված Երեւանի 2800-ամյակին:

«Ի դեպ, ձեր հարեւանները նման հարցերում շատ ակտիվ են: Ադրբեջանցիները Մոսկվայում վերջերս նշեցին իրենց հանրապետության ստեղծման 100-ամյակը»,- նկատեց ԱՊՀ երկրների հումանիտար համագործակցության միջպետական հիմնադրամի ներկայացուցիչ Անատոլի Իկսանովը:

Լիլիթ Մակունցն ընդունեց նաեւ ՌԴ Դաշնային Խորհրդի անդամ, ազգությամբ բաշկիր, իրավաբան, հայագետ Ռաֆայել Զինուրովին:

«Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխություններն ինձ համար այնքան էլ էական չեն. իմ աչքում բոլորդ հայ եք՝ ինչպես նախկինում, այնպես էլ հիմա, որովհետեւ ես հայագետ եմ: Հայաստանը Ռուսաստանի վստահելի գործընկերն ու լավագույն բարեկամն է, հետեւաբար մենք կարեւորում ենք Հայաստանի հետ հարաբերությունների զարգացումն ու խորացումը բոլոր ոլորտներում, այդ թվում՝ մշակութային: Հայերի մշակութային ներկայությունը Ռուսաստանում չափազանց ակնառու է, բայց պետք է նաեւ նշեմ, որ հայերը լավագույն գործարարներն են Ռուսաստանում, միաժամանակ՝ շատ օրինապահ: Այդ մասին ես գրել եմ նաեւ հայերին ու Հայաստանին նվիրված իմ նոր գրքում»,- հանդիպմանն ասաց Ռաֆայել Զինուրովը՝ իր նշած նոր՝ «Очерки новой и новейшей Армении'» (ակնարկներ նոր եւ նորագույն Հայաստանի մասին) գիրքը, հայերեն մակագրությամբ նվիրելով նախարարին:

«Հայաստան. հազարամյակների ուղի» եռահատորի, մեր երկրին նվիրված այլ աշխատությունների հեղինակ Ռաֆայել Զինուրովն էլ է «Գորիսը՝ 2018-ի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք» միջոցառումներին մասնակցելու համար Հայաստանում:

Մշակույթի նախարարն ընդունեց նաեւ նույն նպատակով Հայաստան ժամանած, ԱՊՀ գործադիր կոմիտեի հումանիտար համագործակցության, ընդհանուր քաղաքական եւ սոցիալական խնդիրների դեպարտամենտի տնօրեն Ալեքսեյ Սազոնովին:

Հայաստանի մշակույթի նախարարը բոլոր հյուրերին խոստացավ հրաշալի ժամանց 2018-ի ԱՊՀ մշակութային մայրաքաղաք Գորիսում:

Աղբյուրը՝ ՀՀ մշակույթի նախարարություն/ Ministry of Culture of the Republic of Armenia

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցը Սյունիք

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանն աշխատանքային այցով հուլիսի 5-ին ժամանել է Սյունիքի մարզ

էջ 1

արդյունքներ է արձանագրել ինն ամիսների ընթացքում: Վարչապետ Փաշինյանը նկատեց, որ համայնքների խոշորացման գործընթացն իրոք վիճահարույց է, բայց ինքը ճիշտ չի համարում «նախկին որոշումները հետ ողորմեա անելը»: **«Ըստ էության մենք մի իրավիճակ ունենք, որ բազմաթիվ համայնքներ խոշորացվել են: Մենք պետք է մի պահ դադար առնենք ու տեսնենք ինչ արդյունքներ են գրանցվել խոշորացված համայնքներում ու գրանցվում են արդյոք: Մեր կառավարությունը պարտավորվում է առանց համայնքների համաձայնության որեւէ խոշորացման գործընթաց ՀՀ-ում չանել»,**-ասաց Նիկոլ Փաշինյանը: Նա նկատեց, որ ինը ամիսը բավարար ժամանակ չէ հարցի նկատմամբ վերաբերմունք ցուցաբերելու համար, անհրաժեշտ է սպասել մեկ-երկու տարի: Նրա խոսքով՝ հնարավոր է լինեն նաեւ համայնքներ, որոնք կցանկանան խոշորանալ, իրենք ընդառաջ կգնան այդ ցանկությանը: **«Կան մասնագետներ, ովքեր պնդում են, որ համայնքների խոշորացումը դրական գործընթաց է, ու պետք է գնալ այդ ճանապարհով: Մենք նրանց ասում ենք՝ գնացեք մարդկանց հետ հաղորդակցվեք, նրանց փաստարկներ ներկայացրեք, բանավիճեք նրանց հետ: Ես կարծում եմ՝ վատ որոշում է խոշորացնել համայնքները՝ առանց բնակիչների կարծիքը հաշվի առնելու»,-**հավելեց Նիկոլ Փաշինյանը:

Անդրադառնալով վթարային շենքերի խնդրին ու դրանցում բնակվողների պայմանները բարելավելուն՝ Նիկոլ Փաշինյանը կոչ արեց դրսում ապրող սիսիանցիներին գալ ու ներդրումներ կատարել հայրենի քաղաքում՝ շեշտելով, որ խոսքն օգնության մասին չէ: Նա վստահեցրեց, որ ինքն անձամբ երաշխավորում է այդ ներդրումների պաշտպանությունը: **«Մենք հիմա աշխատում ենք մաքսիմալ նվազեցնելու հիպոթեքային վարկերի տոկոսները, որպեսզի մարզերում սկսեն սոցիալական նշանակության բնակարանաշինություն»,**-տեղեկացրեց վարչապետը:

***

«Հայաստանը ՀՀ քաղաքացիների սեփականությունն է, մենք այստեղ պետք է տիրոջ զգացումով ապրենք ու աշխատենք»: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ Գորիսում բնակիչների հետ հանդիպմանն ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նա ներկաներին շնորհավորեց Սահմանադրության օրվա առիթով եւ ասաց, որ Հայաստանում իշխանությունը ժողովրդինն է: **«Սահմանադրությունում գրված է, որ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին, ես բոլորիդ շնորհավորում եմ դրա կապակցությամբ: Հայաստանում տեղական իշխանների եւ իշխանիկների ժամանակն անցել է, ՀՀ քաղաքացին ազատ է ու հպարտ: Նա պատասխանատու է իր երկրի համար: Սա է մեր հիմնական ուղերձը»,**-ասաց Նիկոլ Փաշինյանը:

Նրա խոսքով՝ ներկայիս Հայաստանի փոփոխությունն այն է, որ բոլոր պաշտոնյաները ծառայում են ժողովրդին, իսկ ժողովուրդը տերն է: **«Գորիսի տերը Գորիսի բնակիչն է, մյուս պաշտոնյաները ծառայում են Գորիսի ժողովրդին: Հայաստանի Հանրապետության տերը ՀՀ քաղաքացին է, բոլոր պաշտոնյաները ծառայում են ժողովրդին: Սա է այն փոփոխությունը, որ տեղի է ունեցել: Սա ձեր հաղթանակն է, այն ձեր ձեռքից բաց չթողնեք: Երբեք թույլ չտաք, որ Հայաստանում հաստատվի մի իշխանություն, որը ծառայում է կլաններին, ծառայում է թալանին ու կոռուպցիային»,**-նշեց երկրի վարչապետը:

Անդրադառնալով գորիսեցիների բարձրացրած հարցերին՝ Նիկոլ Փաշինյանը նկատեց, որ Հայաստանում արդար դատական համակարգ ունենալու համար գործադիր իշխանությունը պետք է զերծ մնա դատարանների վրա ճնշում գործադրելուց: **«Ես հասկանում եմ, որ դատարանների վճռի նկատմամբ վստահություն չկա, բայց պետք է ամեն ինչ անենք, որ այդ վստահությունը մեծանա: Այն դատավորները, որոնք կաշառքով, ինչ-որ ապօրինի միջոցներով վճիռ կիրականացնեն, մենք նրանց կհայտնաբերենք ու կհեռացնենք համակարգից, բայց գործադիր իշխանությունը դատականի նկատմամբ ճնշումներ չպետք է գործադրի ու հարկադրի»,**-ընդգծեց Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետին Գորիսում «Դուխով» մակագրությամբ գլխարկ փոխանցեցին, որի առնչությամբ՝ նա մի դիտարկում արեց: Նա նշեց, որ վերջին շրջանում նկատել է՝ այդ լոգոն առեւտրային նպատակներով է օգտագործվում բուքմեյքերական ընկերությունների կողմից, ինչն իրեն մտահոգում է: **«Կոչ կանեի, որ այդպիսի նպատակներով չօգտագործվի այս լոգոն, առանց դրա էլ մարդիկ խաղադրույքների պատճառով բազմաթիվ խնդիր են ունենում: Եթե այդպես շարունակվի, պետք է մտածենք՝ այդ լոգոյի հետ ինչ անենք»,**-ավելացրեց վարչապետ Փաշինյանը:

***

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը գորիսեցիներին վստահեցրեց, որ Հայաստանում անձեռնմխելի մարդիկ այլեւս չկան ու չեն լինելու: Նա նշեց, որ իրավախախտում եւ հանցագործություն կատարած ցանկացած անձ պետք է պատասխանատվության ենթարկվի: Վարչապետը հույս հայտնեց, որ այդ հարցում ժողովուրդը կստարի իրեն ու կառավարությանը: **«Ես ակնկալում եմ, որ ժողովուրդն ամուր կկանգնի իմ ու կառավարության կողքին, որ Հայաստանում «բեսպրեդելի» վերջը տանք ու արմատախիլ անենք»,**-«Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ ասաց վարչապետը:

Երբ հավաքված մարդկանց միջից հնչեցին անձանց անուններ, թե արդյոք նրանք եւս պատասխանատվության կենթարկվեն, Նիկոլ Փաշինյանն ասաց. **«Քրեական դատավարության մեջ կա այսպիսի սկզբունք, գոյություն ունի անմեղության կանխավարկած, որ մարդն ինքը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, դատախազությունը, իրավապահ մարմինները պետք է ապացուցեն անձի մեղավորությունը: Ես չեմ ասում այսինչ անձը հանցագործ է, ես ոչ քննիչ եմ, ոչ դատախազ: Ես ասում եմ, որ Հայաստանում անձեռնմխելի մարդիկ չկան՝ սկսած ինձնից՝ վերջացրած մյուսներից»:**

Վարչապետ Փաշինյանը հավաստիացրեց, որ ինքը որեւէ մեկից կախվածություն չունի, միայն ժողովրդից: **«Որքան դուք կանգնած լինեք կառավարության ու իմ կողքին, Հայաստանում կառուցման, զարգացման, օրինականության հաստատման գործընթացները շարունակվելու են: Որ պահին զգամ, որ չունեմ ձեր աջակցությունը, մեկ րոպե ավելի չեմ մնա վարչապետի աշխատասենյակում ու կարգավիճակում: Իմ խնդիրը ձեզ ծառայել է, ձեր խնդիրը, որ իմ ծառայությունը լինի մաքսիմալ արդյունավետ»,-** եզրափակեց պաշտոնյան:

***

Հայաստանի կառավարությունը համայնքների հետ տրամադրված է կառուցողական աշխատանքի: «Արմենպրես»-ի հաղորդմամբ այս մասին նշեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Գորիսում Սյունիքի մարզի համայնքների ղեկավարների հետ հանդիպմանը:

«Գիտեմ, որ այս փոփոխությունների ընթացքում համայնքների ղեկավարների շրջանում ապագայի հետ կապված կան անորոշություններ: Ասեմ, որ մենք տրամադրված ենք կառուցողական աշխատանքի, պատրաստ ենք մեկտեղել մեր ուժերը եւ իրական փոփոխություններ բերել: Այդ պրոցեսն արդեն զգացվում է, այսօր խնդիր ենք դրել այդ փոփոխությունները տարածել հանրապետությունով մեկ»,-ասաց Նիկոլ Փաշինյանը:

Նիկոլ Փաշինյանը խոսեց խաղի կանոնների մասին: Նա նշեց, որ կան փաստեր, ըստ որոնց՝ որոշ համայնքներում գոյություն չունեցող աշխատողներ են գրանցվում, ինչն, ըստ վարչապետի, շատ վատ երեւույթ է: Նա կոչ արեց, որ դրանք շատ արագ վերացվեն, բանը չհասնի իրավապահ մարմինների միջամտությանը:

«Ես չեմ կարծում, որ արդյունավետության խնդիրը պետք է լուծենք միայն իրավապահ մարմինների միջոցով: Մեզնից յուրաքանչյուրի ամենօրյա խնդիրը պետք է լինի պետական միջոցներն արդյունավետ ծախսելը: Ես, վարչապետ ընտրվելուց հետո, հանդիպեցի գործարարներին ու պաշտոնապես հայտարարեցի, որ ազատված են կոռուպցիոն պարտավորություններից: Այսօր էլ ասում եմ, եւ խոսքս ուղղում ձեզ, ազատված եք կոռուպցիոն պարտավորություններից: Պետք չէ թողնել ամեն ինչ հասնի իրավապահներին, ֆիքսենք մի բան, ինքներդ գնացեք ձեր գործունեությանը նայեք այլ աչքերով: Մենք այլ տարբերակ չունենք, մարդիկ շատ արագ պետք զգան փոփոխությունները»,-ասաց Նիկոլ Փաշինյանը:

ՀՀ վարչապետի խոսքով՝ ով ազնվորեն կծառայի այս նպատակին, ապա պատրաստ են աշխատել, աջակցել, ստանալ նրա օգնությունը, համախմբել ներուժն ընդհանուր խնդրի շուրջ:

Խոսելով սուբվենցիաների մասին՝ վարչապետը նշեց, որ այդ նպատակին 2018 թվականին նախատեսված է եղել 5 մլրդ դրամ, եւ քանի որ ֆինանսական խնդիրներ կան, հետեւաբար նա առաջարկեց չարաշահումների, կոռուպցիոն բացահայտումների արդյունքում վերականգնված գումարից 10 մլրդ դրամ հատկացնել սուբվենցիաներին, այսինքն՝ համայնքների կողմից ներկայացրած այն ծրագրերին, որոնք 40 տոկոսով ֆինանսավորվում են համայնքների, 60 տոկոսով կառավարության կողմից:

Վարչապետը տեղեկացրեց, որ բյուջեում 48 մլրդ-ի չափով նախատեսվածից ավելի հավաքում ունենք: Ընդ որում՝ այդ թվերի մեջ հաշվարկված չեն վնասները, որոնք վերականգնվել են իրավապահ մարմինների բացահայտումների շնորհիվ:

***

Գորիսում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպմանը Սյունիքի մարզի Նժդեհ համայնքի ղեկավարը բարձրացրեց գյուղտեխնիկայի հարցը: Գյուղատնտեսական աշխատանքների թեժ շրջանում համապատասխան գյուղտեխնիկա չունեն աշխատանքները պատշաճ կազմակերպելու համար:

«Գյուղտեխնիկա կարող ենք ձեռք բերել կոոպերատիվների միջոցով, որտեղ անհրաժեշտ է 20 տոկոս ներդրում, բայց մեր ֆինանսական կարգավիճակը հաշվի առնելով անհրաժեշտ գումարը չունենք: Ներդրման չափը կազմում է 10 մլն դրամ, որից 5 մլն-ն արդեն ունենք, հավաքել ենք: Տրակտորներ խոտհնձիչներ: Որքան շուտ, այնքան լավ»,- «Արմենպրես»-ի հաղորդմամբ ասաց համայնքի ղեկավար Գեղամ Օհանյանը:

ՀՀ վարչապետը լսեց խնդիրը եւ խոստացավ լուծել այն:

Համայնքի ղեկավարները բարձրացրեցին նաեւ միջհամայնքային տրանսպորտի, խմելու, ոռոգման ջրի հարցը:

Տրանսպորտի հետ կապված վարչապետը նշեց, որ պետք է նկատի ունենալ համայնքների խոշորացման հանգամանքը, հետեւաբար ուշադրության կենտրոնում պետք է պահել նաեւ խոշորացված համայնքների խնդիրները:

«Խոշորացումից Գորիսում 9 համայնք է ներառված, որից 4-ն ունի հուսալի տրանսորտային կապ Գորիս քաղաքի հետ: Դա արդեն լուրջ խնդիր է, հարցին պետք է նայել երկարաժամկետ, աշխատեք այնպես, որ համայնքի ենթակառուցվածքները զարգանան ու դա կախված չլինի մի մեկ մարդուց կամ բարեգործությունից: Այսօր բարեգործական ծրագրով տրանսպորտային որոշ կարճ երթուղիներ ապահովվում են տրանսպորտով անվճար, բայց միգուցե ինչ-որ սիմվոլիկ գումար սահմանենք ու այդ երթուղին երկարացվի եւ մարդիկ հուսալի տրանսպորտային կապ ունենան»,-ասաց ՀՀ վարչապետը: Նա ընդգծեց, որ հանրային ենթակառուցվածքի զարգացումը պետք է առաջնահերթություն լինի:

***

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը վստահեցնում է, որ հանքարդյունաբերության հետ կապված փաստեր հավաքելու դեպքում կկայացվեն համապատասխան որոշումներ: Մեղրիում բնակիչներից մեկն անդրադարձավ Լիճքի հանքավայրի շահագործման դեմ պայքարին եւ նշեց, որ հետեւելով վարչապետի կոչին՝ դադարեցրել են բողոքի ակցիաները եւ հույս ունեն, որ այդ հարցին կտրվի արդար լուծում:

Վարչապետն ընդգծեց, որ Հայաստանի տնտեսությունը կազմված է հետեւյալից՝ մեր երկրի ընդերքը քանդվում է, արտահանվում ու համարում, որ տնտեսությունն աճում է՝ կախված նաեւ պղնձի գներից: **«Կարծում եմ՝ սա խնդիր է, բայց չեմ կարծում, որ պետք է հանքարդյունաբերությունը փակենք: Հանձնարարական եմ տվել, որ բոլոր մետաղական հանքավայրերում ստուգումներ իրականացվեն, ստուգվի դրանց համապատասխանությունը բնապահպանական նորմերին: Խնդրում եմ հնարավորություն տալ, որ հավաքվեն փաստեր, որոնց հիման վրա հնարավոր կլինի կայացնել որեւէ որոշում: Ես որպես վարչապետ իրավունք չունեմ հենց այնպես որոշել, որ հանքերը փակվեն: Խնդիրներին ծանոթ եմ, որոշում կայացնելու համար պետք է հավաքել փաստեր, որոնք կլինեն անառարկելի, որոնց հիման վրա էլ հնարավոր կլինի կայացնել որոշումներ: Դրանք պետք է կայացվեն այնպես, որ ՀՀ-ն դրանից չտուժի, որովհետեւ այդ նույն ներդրողները կարող են Հայաստանին դատի տալ եւ ՀՀ-ն դրա արդյունքում ստիպված լինի մեծ միջոցներ հատկացնել»,**- «Արմենպրես»-ի փոխանցմամբ, ասաց Նիկոլ Փաշինյանը:

Միաժամանակ, կառավարության ղեկավարը նշեց, որ ճանապարհ փակելը խնդրի լուծում չէ, քաղաքացիական անհնազանդության գործողություններն անում են այն դեպքում, երբ կառավարությանը չեն վստահում:

Վարչապետն ընդգծեց, որ որեւէ հանքի հետ կապված որեւէ կոռուպցիոն պարտավորություն չունի, իր միակ պարտավորությունը ժողովրդի առաջ է:

***

ՀՀ կառավարությունը հետեւողականորեն գնալու է ժողովրդից գողացված յուրաքանչյուր միջոցի հետեւից: Այդ մասին Մեղրիում բնակիչների հետ հանդիպմանը հայտարարեց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

«Բոլորին չենք կարող ձերբակալել, բայց հերթով նրանց, ովքեր ժողովրդից գողացել են, պետք է ձերբակալել: Ինձ համար կլինի խայտառակություն, որ իմ իշխանության օրոք որեւէ մեկը քաղբանտարկյալ լինի, մեզ համար կարեւորը արժեքներն են, օրինականությունն է, մենք չենք պատրաստվում ուրիշի թալանը մեր թալանով փոխարինել, մենաշնորհը՝ մեր մենաշնորհով փոխարինենք: Մենք պատրաստվում ենք օրենքի տառին համապատասխան ժողովրդից գողացված ամեն կոպեկի հետեւից գնալ ու համոզված եղեք, որ գնալու ենք»,- «Արմենպրես»-ի փոխանցմամբ, ասաց Նիկոլ Փաշինյանը:

Նրա խոսքով՝ կառավարությունն ամեն ջանք գործադրելու է, որ ՀՀ-ից գողացված ամեն կոպեկ վերադարձվի պետական բյուջե, սրանում իշխանություններն ունեն ժողովրդի աջակցության կարիքը: **«Ինչքան պինդ կանգնած մնաք այս պրոցեսի կողմը՝ մենք հետեւողականորեն կգնանք առաջ, ոչնչի առաջ չեմ կանգնելու: Ձեզնից յուրաքանչյուրի առաջ ունեմ պարտավորություններ, որ մենք թալանվածը վերադարձնելու ենք հետեւողականորեն, անկախ թալանողի անուն ազգանունից»,**- ասաց Նիկոլ Փաշինյանը:

***

Սյունիքի մարզ կատարած այցի շրջանակում վարչապետ Նիկոլ Փաշինյանը եղել է Մեղրի ազատ տնտեսական գոտում: Վարչապետը շրջայց է կատարել գոտու տարածքով, ծանոթացել այստեղ ստեղծված ենթակառուցվածքային պայմաններին եւ առաջիկայում նախատեսվող աշխատանքներին: Նշվել է, որ գոտու կառուցման առաջին փուլով ստեղծվել են նվազագույն անհրաժեշտ ենթակառուցվածքներ եւ նախապայմաններ՝ ԱՏԳ աշխատանքները մեկնարկելու եւ ԱՏԳ-ում գործունեություն ծավալելու հետաքրքրություն ունեցող ընկերությունների հետ տեղում գործունեությունը կազմակերպելու համար: Նշվել է, որ այժմ կան արտերկրյա մի քանի ընկերություններ, որոնք հայտ են ներկայացրել գոտում գործունեություն ծավալելու համար: Տեղեկացվել է նաեւ՝ ԱՏԳ-ն ունի տարածքն ընդլայնելու խնդիր, ինչի հետ կապված ընթանում են համապատասխան քննարկումներ: Ակնկալվում է, որ Իրանի հետ սահմանակից տարածքում ստեղծվող ազատ տնտեսական գոտին, հաշվի առնելով աշխարհագրական դիրքը, առեւտրային եւ լոգիստիկ հնարավորությունները, կարող է կամուրջ դառնալ Իրանի, ԵԱՏՄ եւ ԵՄ երկրների միջեւ:

Ապա կառավարության ղեկավարը եղել է Սյունիքի տարածաշրջանային մաքսատան «Մեղրի» մաքսային կետում: Պատասխանատուները Նիկոլ Փաշինյանին են ներկայացրել մաքսատան աշխատանքը ու մատուցվող ծառայությունները, զեկուցվել է, որ մաքսատունը գործում է 24-ժամյա ռեժիմով, քաղաքացիների եւ տնտեսվարող սուբյեկտների անցումը մաքսակետով կազմակերպվում է սեղմ ժամկետներում: Վարչապետը մաքսատան տարածքում նկատել է մի քանի խնդիրներ եւ հանձնարարել սեղմ ժամկետներում վերացնել դրանք: Նիկոլ Փաշինյանը զրուցել է նաեւ մաքսատանն ապրանքներ մաքսազերծող քաղաքացիների հետ՝ հետաքրքրվել, թե ինչ խնդիրների են բախվում: Նրանք գոհունակություն են հայտնել մատուցվող ծառայություններից եւ նշել, որ մաքսազերծման աշխատանքների տեւողությունը զգալիորեն կրճատվել է:

Նիկոլ Փաշինյանը հանձնարարել է պատասխանատուներին՝ շարունակել մաքսակետում մատուցվող ծառայությունների բարելավման աշխատանքները՝ ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների համար անհրաժեշտ ժամանակահատվածը կրճատելու, սահմանահատումն առավել սահուն եւ արագ կազմակերպելու եւ մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու ուղղությամբ:

Նիկոլ Փաշինյանն այցելել է նաեւ Մեղրիի բժշկական կենտրոն, ծանոթացել այստեղ ստեղծված պայմաններին ու մատուցվող ծառայություններին:

***

Սյունիքի մարզում գտնվող վարչապետ Նիկոլ Փաշինյանն այցելել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ: Կառավարության ղեկավարը շրջայց է կատարել հանքարդյունաբերական ձեռնարկության տարածքում, որի ընթացքում կոմբինատի ղեկավարները նրան են ներկայացրել ընթացիկ իրավիճակը, ցուցանիշներն ու զարգացման ծրագրերը: Մասնավորապես, տեղեկացվել է, որ իրականացված 20 մլն դոլարի ներդրումային նոր ծրագրով կոմբինատում ներդրվել են ժամանակակից նորագույն սարքավորումներ, որոնք հնարավորություն կտան շահագործել նաեւ ցածր պարունակությամբ հանքաքարերը:

Այնուհետեւ Նիկոլ Փաշինյանը եղել է «Սյունիք Ֆուդ» գործարանում: Ընկերության ներկայացուցիչները տեղեկացրել են, որ նոր ներդրողների հետ պայմանավորվածության արդյունքում արդեն իսկ լուծվել են ֆինանսական խնդիրները եւ առաջիկայում գործարանը կսկսի ծավալուն գործունեություն՝ զբաղվելով մրգի ու բանջարեղենի պահածոների արտադրությամբ: Նշվել է, որ ընկերությունում կստեղծվի 300 նոր աշխատատեղ, իսկ արտադրանքը նաեւ կարտահանվի: Նիկոլ Փաշինյանը ողջունել է իրականացվող աշխատանքները, արտադրության ընդլայնումն ու աշխատատեղերի ստեղծումը՝ ընդգծելով, որ ՀՀ կառավարությունը երաշխավորում է օրենքի դաշտում գործունեություն ծավալող յուրաքանչյուր ներդրումային ծրագրի անվտանգությունը:

Այցի շրջանակում վարչապետ Փաշինյանը եղել է նաեւ Պաշտպանության նախարարության N զորամասում՝ զրուցել զինծառայողների եւ սպայական անձնակազմի հետ, ծանոթացել ծառայողական ու կենցաղային պայմաններին:

***

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Քաջարանում հայտարարեց, որ Հայաստանի ամեն քառակուսի մետրը վերակառուցելու ու ծաղկեցնելու կամք ունեն: Նա բոլորին հորդորեց միավորվել այս նպատակի շուրջ: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ վարչապետ Փաշինյանը քաջարանցիներին տեղեկացրեց, որ հակակոռուպցիոն գործողությունների արդյունքում հավաքված գումարներից հատկացումներ կկատարվեն համայնքային ծրագրերին: **«Այս այցն ունի նաեւ գործնական նպատակ՝ տեղում ծանոթանալ իրավիճակին, տեսնել խնդիրները, որոնք պետք է առաջնահերթ լուծենք: Մարզային իշխանությունների եւ տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների հետ քննարկել ենք լուծումները: Այսօր արդեն շատ կոնկրետ որոշումների ենք հանգել: Դա վերաբերում է սուբվենցիաներին: Կառավարություն-ՏԻՄ համատեղ ծրագրերին, որոնց համար 2018-ի բյուջեով գումարներ նախատեսված չեն եղել: Սյունիք մեր կատարած այցի ընթացքում գործընկերների հետ քննարկման արդյունքում որոշվեց հակակոռուպցիան գործողությունների արդյունքում հավաքված 10 միլիարդ դրամ հատկացնել կառավարության եւ համայնքների համատեղ ծրագրերին»,**-ասաց Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը նկատեց, որ, չնայած Քաջարանում տեղակայված է խոշոր արդյունաբերական կենտրոն, այնուամենայնիվ,

քաղաքային ենթակառուցվածքներն այնքան էլ զարգացած չեն: **«Այս պայմաններում պետք է քաղաքի միջին վիճակը որակապես տարբերվեր մյուս քաղաքների վիճակից, բայց ճանապարհների վիճակն, օրինակ, սպասվածի մակարդակի չէր»,**-հավելեց Փաշինյանը:

Վարչապետը չմոռացավ շնորհավորել քաջարանցիներին Սահմանադրության օրվա առիթով: **«Եկել ենք ձեր աչքերի մեջ նայելու, ձեր «դուխը» զգալու, համոզվելու, որ դուք գիտեք՝ այն փոփոխությունները, որ տեղի են ունեցել եւ հաղթանակը ձեզանից յուրաքանչյուրի կերտածն է: Այսօր այդ հաղթանակը տոնելու կարեւոր օր է, քանի որ այսօր Սահմանադրության օրն է: Սահմանադրության երկրորդ եւ անփոփոխելի հոդվածում գրված է՝ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին»,-** ասաց Նիկոլ Փաշինյանը՝ հավելելով, որ որեւէ մեկը չի համարձակվի ոտնձգություն իրականացնել ժողովրդի իշխանության վրա:

***

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հուլիսի 10-ին խորհրդակցություն կանցկացնի «Հյուսիս-հարավ» ավտոճանապարհի կառուցման ծրագրի առնչությամբ: «Արմենպրես»-ի փոխանցմամբ՝ վարչապետն այս հարցին անդրադարձավ Քաջարանում բնակիչների հետ հանդիպման ընթացքում: **«Բազմիցս հարց է բարձրացվել, թե ինչու ճանապարհի շինարարությունը սկսվեց Երեւան-Արտաշատ եւ ոչ թե Մեղրի-Կապան հատվածից: Դա անհեթեթ մոտեցման արդյունք է: Երեքշաբթի օրը խորհրդակցություն է հրավիրված «Հյուսիս-հարավ» ճանապահի հետ կապված, քանի որ լուրջ խնդիրներ կան»,**-ասաց Նիկոլ Փաշինյանը: Նրա բնորոշմամբ՝ այն հատվածները, որոնք արդեն կառուցվել են, բազմաթիվ թերություններ ունեն:

Փաշինյանը նշեց, որ ներկայում կան ներդրումային առաջարկներ, ըստ որոնց՝ կկառուցվի թունելներով ճանապարհ Սիսիանից դեպի Լիճք: Վարչապետը խոստացավ, որ այդ ծրագրերը կդարձնեն քննարկման առարկա: Կուսումնասիրեն նաեւ կարեւոր նշանակության ավտոճանապարհի կառուցման հետագա ընթացքին վերաբերող հարցերը: **«Ես նաեւ իրավապահներին եմ հանձնարարել, որ այդ ճանապարհին ավելի ուշադրությամբ հետեւեն: Եթե կան չարաշահումներ, բոլոր մեղավորները բացահայտվեն ու պատասխանատվության ենթարկվեն: Հույս ունեմ, նկատել եք՝ Հայաստանում ամենաթողության դարն ավարտվել է: Որեւէ մեկը չի կարող հանցանք կատարել ու մնալ անպատիժ»,-** եզրափակեց պաշտոնյան:

***

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի՝ Սյունիքի մարզ կատարած այցի վերջին կանգառը Կապան քաղաքն էր, որտեղ բնակիչների հետ հանդիպումն այնքան էլ հարթ չանցավ: «Արմենպրես»-ի հաղորդմամբ՝ Նիկոլ Փաշինյանը նախ ողջունեց ներկաներին, շնորհավորեց Սահմանադրության տոնի առթիվ եւ հարց հղելու հնարավորություն տվեց ցանկացողներին՝ նշելով, որ այսպիսով իրենք փորձում են տեղում քարտեզագրել առկա խնդիրները, որպեսզի հետագայում դրանց լուծում տան:

Ի սկզբանե քաղաքացիների հարցերը վերածվեցին կամ ելույթների, կամ նեղ անձնական խնդիրների բարձրաձայնման, որոնց ի պատասխան՝ Նիկոլ Փաշինյանը հորդորեց հանրային նշանակության հարցեր բարձրացնել: **«Խնդրում եմ համայնքի, մարզի, ընդհանուր բնույթի խնդիրների մասին խոսեք, դա ավելի արդյունավետ կլինի»,**-ասաց վարչապետը:

Կապանցիներն առանց իրար հերթ տալու փորձեցին հարցեր տալ, որոշ քաղաքացիներ, տեղից խոսելով, խանգարում էին արդեն հարց հնչեցնող անձանց: Նիկոլ Փաշինյանը մեկ-երկու անգամ ընդհատեց հարց ու պատասխանը, քայլեց դեպի հավաքված մարդկանց՝ ձայնի իրավունքը տալով այդ մարդկանց:

Սանկտ Պետերբուրգից բնակվող երիտասարդ աղջկա դիտարկմանը, որ Հայաստանի տարբեր ոլորտներում զարգացումը կնպաստի իր նման շատ այլ անձանց կողմից Հայաստանում ապրելու որոշում կայացնելուն՝ Նիկոլ Փաշինյանը պատասխանեց. **«Ես համաձայն չեմ ձեզ հետ, որ Հայաստանում չկա հնարավորություն, ընդհակառակը՝ հենց**



այսօրվանից կարող եք մտածել Հայաստան վերադառնալու մասին: Այսօր Հայաստանում մարդիկ հնարավորություն ունեն ինքնադրսեւորվելու: Կա իրավական հավասար դաշտ, ներդրումներ կատարելու հնարավորություն, որոնք պաշտպանված են: Ձեր ծնողներին, բոլոր հայերին կոչ եմ անում վերադառնալ ու այստեղ աշխատատեղեր բացել, ոչ թե բարեգործություն անել»:

Ինչ վերաբերում է Կապանի բնապահպանական իրավիճակի հետ կապված մտահոգությանը, ապա վարչապետը հիշեցրեց, որ կառավարությունն ու բնապահպանական տեսչական մարմինը Հայաստանի մետաղական հանքերում իրականացնելու են ստուգումներ՝ պարզելու արդյոք դրանք գործում են ՀՀ օրենսդրությանն ու բնապահպանական կանոններին համապատասխան, թե ոչ: **«Եթե պարզվի, որ որեւէ պոչամբար, հանք գործում է այդ կանոններից դուրս, ապա դրանց առաջ պահանջ կդրվի ամբողջ գործունեությունը համապատասխանեցնել ՀՀ օրենսդրությանը»,**-ասաց Փաշինյանը:

Հանդիպման ավարտին եւս որոշակի խժդժություններ եղան: Փոքրիկ աղջնակի լուսանկարվելու խնդրանքը վարչապետը չմերժեց, ավելին՝ համաձայնեց նկարվել բոլոր երեխաների հետ, ինչը, սակայն, առաջացրեց հրմշտոց, եւ ոչ այնքան երեխաների, որքան մեծահասակների կողմից: Արդյունքում՝ Նիկոլ Փաշինյանը զսպվածության կոչ արեց եւ խորհուրդ տվեց պաշտոնյայի հետ շփումը չդիտարկել որպես երկնային հրաշք: **«Սա սովորական իրադարձություն է, որ ձեզ հետ պետք է անընդհատ տեղի ունենա: Եկեք՝ պայմանավորվենք, որ այս շփումը պետք է լինի կանոնակարգված: Ես ձեզ կոչ եմ անում, որ ձեր դիրքը բոլոր դեպքերում լինի որպես ազատ, հպարտ ու արժանապատիվ քաղաքացի»,**-եզրափակեց վարչապետ Փաշինյանը:

Պլեբիսցիտ Կապանում, որի արդյունքում մերժվեց համայնքապետ Աշոտը

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի հուլիսի 5-ի կապանյան հանդիպումը, ամեն ինչից զատ, յուրօրինակ հանրաքվե էր լրջագույն մի հարցով՝ հանդուրժե՞լ Աշոտ Հայրապետյանին Կապանի համայնքի ղեկավարի աթոռին, թե՞ ոչ:

Հանդիպման առաջին րոպեներից հարցեր ուղղվեցին ոչ թե Նիկոլ Փաշինյանին, այլ Աշոտ Հայրապետյանին:

Վարչապետը փորձեց խոսափողը տրամադրել համայնքապետին, բաց հրապարակը թնդաց սուլոցներից, մերժումի բացականչություններից:

Եվ Աշոտ Հայրապետյանը խոսելու հնարավորություն պարզապես չստացավ:

Հանդիպման ամբողջ ընթացքում հնչած բազում հարցերում նորանոր դրվագներ մատնանշվեցին, որոնք երիցս բացահայտեցին Կապանի համայնքապետի օտարված վիճակը համայնքի կյանքից:

Աշոտ Հայրապետյանի հրաժարականը պահանջող կոչեր հնչել էին նաեւ ապրիլ-մայիսյան ցույցերի ընթացքում, բայց դրանք մարդկանց առանձին խմբերի պահանջն էին, իսկ հիմա… Ըստ էության հուլիսի 5-ին Աշոտ Հայրապետյանի հրաժարականը պահանջեց գրեթե ողջ Կապանը:

Կշարունակի՞ Աշոտը պնդել, որ իր օրակարգում հրաժարականի հարց չկա, թե՞ կամավոր կհեռանա զբաղեցրած պաշտոնից. դա, անշուշտ, ժամանակը ցույց կտա: Սակայն տվյալ հարցի պատասխանն այլեւս կարեւոր չէ: Կարեւորն այն է, որը Կապանը վերջնականապես ու ցուցադրաբար մերժեց համայնքի ղեկավարի պաշտոնում (ինչ-ինչ հանգամանքների արդյունքում) հայտնված Աշոտ Հայրապետյանին եւ նրան մղեց քաղաքական կյանքի լուսանցք:

Երեւի պետք չէր այդչափ կորցնել սեփական դեմքը՝ չարափառ մարզպետի կիսատպռատ ժպիտին արժանանալու համար…

Երեւի պետք չէր Կապանի արժանապատվությունը մատաղ անել հրոսակի ոտքերի տակ…

Երեւի պետք չէր կապանյան իրականության բոլոր հարցերի առնչությամբ միեւնույն պատասխանը տալ՝ «Ես ոչ մի կապ չունեմ, դա թիմն է որոշում»:

Երեւի պետք չէր մարզկենտրոնում կուրորեն միանալ գաղութարարների կողմից ընդդեմ ազատ խոսքի հայտարարված պատերազմին, որ համահունչ էր միջնադարյան ինկվիզիցիայի ավանդույթներին:

***

Կապանի համայնքապետարանից հուլիսի 6-ին տեղեկացրին, որ համայնքի ղեկավար Աշոտ Հայրապետյանը քիչ առաջ հավաքել է համայնքապետարանի աշխատակիցներին եւ հայտարարել իր հրաժարականի մասին:

Հրաժարականի մասին որոշումն Աշոտ Հայրապետյանն ընդունել է այն բանից հետո, երբ մեկ օր առաջ՝ 2018թ. հուլիսի 5-ին, Կապան այցելած վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ հանդիպման ժամանակ կապանցիները ոչ միայն դատապարտել էին նրա գործելակերպը, այլեւ թույլ չէին տվել, որ նա պատասխանի բարձրացված հարցերին:

Կապանցիների հետ հանդիպման վերջում Նիկոլ Փաշինյանը հայտարարեց, թե ինքը փակ հանդիպում ունի Կապանի համայնքապետարանում, ինչի համար շտապում է: Մենք չկարողացանք ճշտել՝ նման հանդիպում տեղի՞ է ունեցել, թե՞ ոչ:

Համայնքապետարանի մեր աղբյուրը, մինչդեռ, տեղեկացնում է, որ վարչապետն է նրան հորդորել՝ հեռանալու մասին խնդրագիր ներկայացնել:

***

Հուլիսի 9-ին՝ ժամը 16-ին, Կապանի համայնքապետ Աշոտ Հայրապետյանը հրաժեշտ տվեց համայնքապետարանի աշխատակիցներին եւ ավագանու անդամներին ու համայնքապետարանի ենթակա կառույցների աշխատակիցներին: Հայտնեց, որ հաստատակամ է համայնքապետի պաշտոնը թողնելու իր որոշման մեջ: Այնուամենայնիվ, համայնքի ղեկավարը հարկ համարեց ներկայացնել համայնքապետարանի քաղաքաշինության բնագավառի 2018 թվականի գործունեությունը, շարունակվող բարեկարգման, շինարարության եւ վերակառուցման աշխատանքների ընթացքը եւ նախատեսվող ծրագրերը, մի շարք ծրագրերի նախագծանախահաշվային փաստաթղթերի նախապատրաստումը:

Աշոտ Հայրապետյանը շնորհակալություն հայտնեց բոլորին՝ համատեղ աշխատանքի համար, հաջողություններ մաղթեց նրանց հետագա աշխատանքում:

«Սյունյաց երկիր»

Այդ աներեսն ինչպե՞ս էր Նիկոլի հետ հայտնվել միեւնույն հարթակում

Նիկոլ Փաշինյանի 2018թ. սյունիքյան այցը, անտարակույս, նշանակալից իրադարձություն էր մեր երկրամասում:

Ամառվա տապին՝ մեկ օրվա ընթացքում, այդքան հանդիպումներ եւ հոգնության ու հիասթափության ոչ մի նշան…

Այցի տասնյակ դրվագներ, անշուշտ, առանձին վերլուծության եւ գնահատման կարիք ունեն:

Մի դրվագ, սակայն, առաջին իսկ վայրկյաններից որակվեց որպես սենսացիա, առեղծված, հանելուկ, անհավանական իրողություն, տեսիլք…

Բանն այն է, որ քաջարանյան հանդիպման ժամանակ Վահե Ա. Հակոբյան անուն-ազգանունով անձնավորությունը հանրապետության վարչապետի հետ հայտնվել էր միեւնույն հարթակում:

Այդ տղան, ինչպես հայտնի է, քսան ամիս զբաղեցրել է Սյունիքի մարզպետի աթոռը:

Ամբողջ այդ ընթացքում նա գործել է ընդդեմ Հայաստանի Հանրապետության, ընդդեմ Հայաստանի սահմանադրության, անարգել կերպով պղծել սյունիքյան արժեքները, մեր սրբասուրբ հողը, ծաղրել սյունեցիներին:

Այդ տղան 2018-ի ապրիլին Նիկոլ Փաշինյանի գլխավորած համաժողովրդական մաքրամաքուր շարժումը գնահատեց իբրեւ հոգեկան հիվանդների շարժում:

Նա մի քանի անգամ խորհրդակցություն անցկացրեց՝ վարկաբեկելով այդ շարժումը, սպառնալով այն ղեկավարներին, ում ենթակաները, կհամարձակվեն մասնակցել քաղաքացիական խաղաղ անհնազանդությանը:

Այդ տղայի օգնականն էր, որ մարզպետ կոչվածի ներկայությամբ ապտակեց ցուցարար երեխային:

Այդ տղայի գիտությամբ էին 2018-ի ապրիլին վարձկաններ բերվել Քաջարանի կոմբինատից՝ կապանցի ցուցարարներին ահաբեկելու համար:

Այդ տղան էր, որ մարզպետարանից հեռացվելու օրն այդտեղից հավաքել-տարել էր նույնիսկ աղբամանները՝ բերված Քաջարանի կոմբինատից, նաեւ էժանագին աթոռները, ջահերը, ինչ-որ համակարգիչներ եւ անտենա…

Այդ տղան էր, որ խլել էր դպրոցականների ճամբարը եւ վերածել այն իր ու իր հարճերի գիշերային խրախճանքի վայրի:

Այդ տղան էր, որ սյունեցի մտավորականներին իրեն անձնական թշնամի էր հայտարարել:

Այդ տղան է, որ մինչեւ օրս չի վերադարձրել Սյունիքից գողացածը:

Այդ տղան է, որ մինչեւ այսօր այդպես էլ չի ասում, թե ինչպե՞ս է իր ինտելեկտուալ եւ կազմակերպչական տկար կարողություններով չորս տարում Սյունիքում դարձել Հայաստանի ամենահարուստ մարդկանցից մեկը:

Հեղափոխության եւ հետհեղափոխական իրադարձությունների տրամաբանությունը ենթադրել էր տալիս, որ նոր Հայաստանում առաջինը եւ անհապաղ պետք է ձերբակալվի Վահե Ա. Հակոբյանը, բայց…

Հուլիսի 5-ին՝ Սահմանադրության օրը, հանկարծ նա

հայտնվում է այն հարթակում, որտեղ կանգնած է ՆիկոլՓաշինյանը, ում Սյունիքում անվանեցին «մեր երազանքների վարչապետ»:

Առեղծվածային այդ երեւույթը, անշուշտ, պարզաբանման կարիք ունի:

Ո՞վ է այդ արարածը հիմա, ի՞նչ կարգավիճակ ունի, մի՞թե ինչ-որ գաղտնի ծառայության ծպտված գործակալ է կամ կոմբինատի սեփականատեր կամ կոմբինատի պաշտոնյա:

Արդյո՞ք թույլատրել են նրան բարձրանալու այդ հարթակ եւ կանգնելու հեղափոխության առաջնորդի կողքին:

Իսկ միգուցե ի՞նքն էր աներեսի պես բարձրացել հարթակ՝ նկարվելու եւ իրենից զզված սյունեցիներին ինչ-որ մեսիջ ուղարկելու համար, ինչը քիչ հավանական ենք համարում:

Չսպասելով այդ հարցերի պատասխանին, վերստին հիշեցնում ենք հնարքի հեղինակներին՝ արեք, ինչ-որ կամենում եք, միեւնույն է՝ Վահե Ա. Հակոբյանը վաղուց արդեն ու հավերժորեն Սյունիքի նորագույն պատմության աղբանոցում է: Եվ նրա բարոյական վերակենդանացմանը միտված ամեն մի քայլ, ում կողմից էլ ձեռնարկված լինի կամ այսուհետ ձեռնարկվի, Սյունիքում դիտվում է եւ կդիտվի իբրեւ Հայաստանի Հանրապետությանը, նաեւ 2018թ.ապրիլ-մայիսյան ազնիվ իրադարձությունների վարկաբեկմանը միտված քայլ:

***

Նիկոլ Փաշինյանի սյունիքյան այցի գագաթնակետը, մի քանի առումով, մարզկենտրոնի բնակչության հետ հանդիպումն էր, որ տեւեց մոտ երեք ժամ:

Հազարավոր կապանցիներ եկել էին ոչ թե թամաշա անելու, այլ շփվելու սիրելի առաջնորդի հետ, իրենց մտահոգող հարցերն ուղղելու Հայաստանի Հանրապետության վարչապետին:

Սակայն հարցերի տարափն այնքան բուռն էր, որ հանդիպումը մի պահ, կարծեք, դուրս եկավ բնականոն հունից:

Մինչդեռ, այն, ինչ տեղի ունեցավ Կապանի Գարեգին Նժդեհի հրապարակում, իր ձեւաչափով, երկրի ղեկավար-հանրություն շփման ակտիվությամբ եւ անկեղծությամբ, անմիջականությամբ եւ անկաշկանդվածությամբ, անօրինակ էր վերջին տարիների կտրվածքով:

Տեղի ունեցածը, անկեղծ լինենք, սպասելի էր, տրամաբանական եւ օրինաչափ:

Մոտ երկու տարի մարդիկ Կապանում չեն գտել մի իշխանավոր, որ իրենց մտահոգությունները հայտնեն նրան:

Մարզպետարանը միայն հայտնի հարճերի ու գործ տվողների համար էր:

Ինքը՝ մարզպետը, օրերով փախչում էր աշխատանքից եւ անհետանում:

Կապանի համայնքապետը, ինքն իրենով լցված, պատվից ցածր էր համարում մարդկանց հետ շփվելը:

Իրավապահ մարմինների ղեկավարները չէին համարձակվում ինքնուրույն քայլ կատարել, թե չէ Վահեն կզայրանար, եւ Քաջարանից փայ չէին ստանա:

Իսկ մարդկանց լսող չկար ու չկար…

Եվ նման մթնոլորտում ազգընտիր վարչապետի հետ այդպիսի ձեւաչափով հանդիպելը, խոստովանենք, փնտրված ու երազած իրավիճակ էր. մարդիկ ձգտում էին իրենց հարցերն ուղղել, իրենց մտահոգությունները հայտնել: Ոչինչ, որ հարցերի մեծ մասը կենցաղային էին, խիստ անձնական եւ տեղական պաշտոնյաների մակարդակում լուծելի, բայց դրանք անձնական ու կենցաղային էին միայն կողքից հայեցողների համար, իսկ իրենց համար՝ շատ կարեւոր:

Կապանի հանդիպումը, այդ ամենով հանդերձ, անհերքելի ապացույց էր այն իրողության, որ վերջին մոտ երկու տարում Սյունիքում իշխանության տարածքային մարմինը՝ մարզպետարանը, չի գործել, ավելի ճիշտ՝ կազմալուծված է եղել, որ Կապանի համայնքապետարանը կապանյան հանրության հետ պատշաճ առնչություն չի ունեցել:

***

Ե՛վ Քաջարանում, եւ՛ Կապանում քաղաքացիները բազմաթիվ հարցեր ուղղեցին վարչապետ Նիկոլ Փաշինյանին՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատին առնչվող:

Վարչապետը, գրեթե բոլոր հարցերին ի պատասխան, հայտարարեց, թե դա մասնավոր ընկերություն է եւ ինքը չի կարող միջամտել մասնավոր ընկերության գործերին:

Վարչապետը, անշուշտ, ճիշտ է ասում:

Այդ դեպքում պարզապես այլ խնդիր է ծագում. ովքե՞ր են մասնավոր այդ ընկերության տերերը, որոնց կարող են մարդիկ դիմել իրենց մտահոգող հարցերով:

Քաջարանի կոմբինատը Սյունիքի տնտեսության (բացի գյուղական տնտեսության) մոտ 80 տոկոսն է կազմում, որից կախված են տասնյակ հազարավոր մարդկանց, բազմաթիվ կոլեկտիվների, բնակավայրերի ճակատագրեր:

Եվ ուրեմն՝ ո՞ւմ դիմեն այդ մարդիկ կոմբինատին առնչվող հարցերով, ինչո՞ւ չեն բացահայտվում բաժնետերերի անունները, որպեսզի մարդիկ դիմեն նրանց եւ ոչ թե անհանգստացնեն բազմազբաղ վարչապետին:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Մեղրի համայնքի ղեկավարն ապօրինի կարգադրություններ է արձակել

Սյունիքի մարզի Մեղրի խոշորացված համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանն ակնհայտ ապօրինի կարգադրություններ է արձակել:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը սահմանում է, որ բազմաբնակավայր համայնքների կազմում ընդգրկված յուրաքանչյուր բնակավայր, բացառությամբ համայնքի կենտրոնի, ունի մեկ վարչական ղեկավար: Մեղրի խոշորացված համայնքի մաս են կազմում Մեղրի եւ Ագարակ քաղաքային, ինչպես նաեւ Ալվանք, Այգեձոր, Գուդեմնիս, Թխկուտ, Լեհվազ, Լիճք, Կարճեւան, Կուրիս, Նռնաձոր, Շվանիձոր, Վահրավար, Վարդանիձոր եւ Տաշտուն գյուղական բնակավայրերը: Մեղրի համայնքի պաշտոնական կայքում բնակավայրերի վարչական ղեկավարների մասին տեղեկությունը թերի է ներկայացված:

Մեղրի համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Մարիամ Ծատրյանից հետաքրքրվեցինք, թե Մեղրի համայնքի մեջ մտնող համայքներից քանիսում վարչական ղեկավար կա: Նշենք, որ վարչական ղեկավարը համայնքի ղեկավարի ներկայացուցիչն է տվյալ բնակավայրում եւ ենթարկվում է համայնքի ղեկավարին:

Պարզվում է՝ Ագարակ քաղաքն ու Կուրիս գյուղն ունեն մեկ վարչական ղեկավար, ով Գևորգ Խաչատրյանն է: Ալվանք եւ Շվանիձոր գյուղերի վարչական ղեկավարն էլ Ալիկ Թումանյանն է: Բացի այդ, թվով 6 համայնքի՝ Վարդանիձորի, Այգեձորի, Թխկուտի, Լեհվազի, Վահրավարի եւ Գուդեմնիսի վարչական ղեկավար է Ռաֆիկ Մկրտչյանը:

Մեղրի համայնքի ղեկավարի մարտի 19-ի կարգադրության մեջ բառացիորեն ասված է. «Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 178, 188 հոդվածներով. կարգադրում եմ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վարդանիձոր բնակավայրի վարչական ղեկավարի լիազորությունները 2018 թվականի ապրիլի 1-ից վերապահել Լեհվազ բնակավայրի վարչական ղեկավար Ռաֆիկ Մկրտչյանին: Ռաֆիկ Մկրտչյանին աշխատանքի ծավալի ավելացման համար վճարել լրավճար՝ ամսական 20 հազար դրամի չափով»:

Երբ համայնքի ղեկավարի մամուլի քարտուղարից հետաքրքրվեցինք, թե ի՞նչ իրավական հիմքով է համայնքապետը մի քանի բնակավայրի մեկ վարչական ղեկավար նշանակել, մեզ ներկայացվեց ՏԻՄ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը: Նշված հոդվածը սահմանում է ընդամենը այն, որ համայնքի ղեկավարը իրավունք ունի կարգադրություն արձակելու:

Տեղական ինքնակառավարման հարցերով անկախ փորձագետ Վահագն Պետրոսյանը, հղում կատարելով ՏԻՄ օրենքին, նշում է, որ բոլոր բնակավայրերում համայնքի ղեկավարը պարտավոր է նշանակել վարչական ղեկավարներ: **«Եթե Հայաստանում կան այնպիսի խոշորացված համայնքներ, որոնց կազմում ընդգրկված բնակավայրերից որեւէ մեկում նշանակված չէ վարչական ղեկավար, կամ նրա պարտականությունների կատարումը դրված է մեկ այլ պաշտոնատար անձի վրա, ապա այդպիսի դեպքերում շրջանցվել է օրենքը»,-** մեր զրույցում նշեց փորձագետն ու հավելեց, որ մեր մատնանշած խնդիրը կարգավորողը տարածքային կառավարման եւ զարգացման նախարարությունն է, որն իրավասու է նման դեպքերում միջոցներ ձեռնարկելու: Նա կարող է առաջարկել համապատասխան համայնքի ղեկավարին՝ օրենքի հիման վրա ձեւավորել վարչական ղեկավարի առանձին հաստիք:

Նրա խոսքով, եթե համայնքի ղեկավարը չի վերանայում իր որոշումը՝ Տարածքային կառավարման եւ զարգացման նախարարության առաջարկության հիման վրա, ապա նախարարությունը կարող է դիմել դատարան եւ պարտավորեցնել համայնքի ղեկավարին՝ կատարելու իրեն օրենքով վերապահված պարտավորությունը:

Այդուհանդերձ փորձագետը գտնում է, որ բնակավայրերում պարտադիր վարչական ղեկավար ունենալու օրենսդրական պահանջն այդքան էլ տրամաբանական չէ: **«Բազմաբնակավայր շատ համայնքներ կան, որոնց կազմում կան այնպիսի բնակավայրեր, որոնց բնակչության թիվը չի գերազանցում անգամ հարյուր բնակիչը: Կարծում եմ, որ անհրաժեշտ է կատարել համապատասխան օրենսդրական փոփոխություններ եւ վարչական ղեկավարի պարտադիր հաստիք ունենալու պահանջը սահմանել 300 եւ ավելի բնակիչ ունեցող բնակավայրերի համար, իսկ մինչեւ 300 բնակիչ ունեցող բնակավայրերի մասով վարչական ղեկավարի նշանակման կամ նրա պարտականությունները այլ պաշտոնատար անձին վերապահելու իրավասությունը թողնել համայնքի ավագանուն»,-** նկատեց Վահագն Պետրոսյանը:

Տիրայր Մուրադյան

Մեկնարկեց ամառային զորակոչը

էջ 1

փոխգնդապետ Գարիկ Ներսիսյանը զեկուցեց Սյունիքի զինկոմին զինակոչիկների՝ պարտադիր զինվորական ծառայության մեկնելու մասին: Հնչեց Հայաստանի Հանրապետության օրհներգը: Հայոց ազգային բանակի ապագա պաշտպաններին ողջերթի խոսքեր հղեց Սյունիքի զինկոմ, «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանի ասպետ, գնդապետ Արարատ Մանուչարյանը: Սյունիքի զինկոմը մասնավորապես այն միտքը հայտնեց, որ սյունեցի զինակոչիկները պարտավոր են շարունակել իրենց հայրերի ավանդույթները, ովքեր Արցախյան գոյամարտի տարիներին հակառակորդին հետ մղեցին մեր սահմաններից, այլեւ ազատագրեցին մեր պատմական տարածքները:

Կապանի համայնքապետարանի կողմից զինակոչիկներին հանձնվեցին հիգիենիայի պարագաներով փաթեթներ:

«Թող այսօրվա զինակոչիկները լինեն խաղաղ օրերի զինվորներ»,- այսպես կարելի է ձեւակերպել բանակ ճանապարհողների մաղթանքը:

Ամառային զորակոչի անդրանիկ հավաքի ժամանակ Կապանի եւ Քաջարանի տարածաշրջաններից կենտրոնական հավաքակայան մեկնեց 50 զորակոչիկ՝ համալրելու հայոց բանակի շարքերը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Սյունիքի մարզպետի երեք տեղակալ, երեքն էլ՝ Կապանից

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի 2018թ. հունիսի 29-ի որոշմամբ Սյունիքի մարզպետի տեղակալ է նշանակվել Հերմինե Համբարձումյանը: Այսպիսով, Սյունիքի մարզպետը կունենա երեք տեղակալ, երեքն էլ՝ Կապանից:

Նախկինում Սյունիքի մարզպետն ունեցել է երկու, վերջին մեկ տարում՝ մեկ տեղակալ:

Թե ինչով կզբաղվեն երեք տեղակալները, կիմանանք շուտով: Իսկ մինչ այդ, հույս ունենք, հանրությանը կներկայացվեն երեք փոխմարզպետների կենսագրությունները:

Հույս ունենք նաեւ, որ կադրային հետագա նշանակումներում նկատի կառնվեն Մեղրու եւ Գորիսի տարածաշրջանները եւս:

«Սյունյաց երկիր»

Գորիսի պետական համալսարանի ռեկտորն արմատական քայլերի է դիմում

Գորիսի պետական համալսարանից ստացված տեղեկությունների համաձայն՝ ռեկտոր Արտյուշա Ղուկասյանի հուլիսի 3-ի հրամանով համալսարանի հումանիտար եւ հասարակագիտական մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Միհեր Քումունցն ազատվել է զբաղեցրած պաշտոնից. դրան նախորդել էր կարգապահական երկու տույժ:

Հիշեցնենք, որ Մ. Քումունցը դեկան էր ընտրվել 2017թ. դեկտեմբերին՝ հասարակությանը հայտնի աղմկահարույց ընտրությունների բովում:

ԳՊՀ 2018թ. հունվարի 19-ի գիտական խորհրդի նիստում ռեկտոր Ա. Ղուկասյանը հայտնել էր ընտրության արդյունքների հավաստիության հետ կապված իր մտահոգությունները եւ հայտարարել այն չեղարկելու իր մտադրության մասին: Սակայն կարճ ժամանակ անց հաստատել էր արդյունքները, եւ Մ. Քումունցի հետ կնքել աշխատանքային պայմանագիր, ինչպես դեկանի ընտրության կարգն է սահմանում:

Ս.թ. հունիսի 15-ին համալսարանում գումարված գիտական խորհրդի նիստից հետո, որը լուսաբանվեց նաեւ «Սյունյաց երկիր» թերթում, Մ. Քումունցն իր ֆեյսբուքյան էջում հանկարծակի հանդես եկավ ռեկտորի հրաժարականի պահանջի հայտարարությամբ եւ տարբեր մեդիահարթակներում սանձազերծեց մեղադրանքների շարան:

Խնդիրը ծագել էր համալսարանում ՀՀ գիտության պետական կոմիտեի կողմից ֆինանսավորվող «Սյունիքի հոգեւոր եւ նյութական ժառանգությունը» խորագրով գիտական ծրագրի շուրջ, որը 2019 թվականին ղեկավարելու համար հայտ էր ներկայացրել ոչ միայն ծրագրի հիմնադիր ղեկավար Մարտին Զիլֆուղարյանը, այլեւ Մ. Քումունցը, ով պահանջ էր դրել գիտական խորհրդի առջեւ՝ մերժել Զիլֆուղարյանի հայտը եւ առաջնությունը տալ իր հայտին:

Համալսարանում վերջին օրերին տեղի ունեցող խմորումներին, ռեկտորի կողմից կիրառված կարգապահական տույժերի հանգամանքներին կփորձենք առաջիկայում անդրադառնալ ռեկտորի հետ հարցազրույցի շրջանակում:

Հավելենք, որ Ա. Ղուկասյանի մեկ այլ հրամանով կարգապահական տույժի է ենթարկվել նաեւ համալսարանի իրավագիտության ամբիոնի վարիչ Մալիկ Թելունցը:

«Սյունյաց երկիր»

«Պարտքով տված» առեղծվածային 300 միլիոն դրամի հետքերով

Hraparak.am-ը գրում է. Հայաստանյան հիմնադրամների շուրջ վերջին սկանդալային բացահայտումները տխուր հետեւությունների տեղիք են տալիս՝ դրանք շեղում են թույլ տվել իրենց կանոնադրական նպատակներից, չարաշահումներ թույլ տվել: Մոտ երկու տարի առաջ՝ 2016-ին դեկտեմբերին, ինչպես գիտենք, կառավարության որոշմամբ ստեղծվեց «Սյունիքի մարզի զարգացման եւ ներդրման» հիմնադրամը, որի հոգաբարձուների խորհրդի նախագահն այդ ժամանակվա մարզպետ Վահե Հակոբյանն էր: Վերջինս նաեւ մեկ այլ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն է՝ 2015-ից գործող «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» հիմնադրամի: Դեռ մինչ հիմնադրամներին վերաբերող սկանդալային բացահայտումները, մամուլում ահազանգ հնչեց, ըստ որի՝ 2016թ. դեկտեմբերի 27-ին Կապանում տեղի ունեցած քննարկումներից մեկի ժամանակ Վահե Հակոբյանը հայտարարել է, թե «Սյունիքի զարգացման եւ ներդրման» նորաստեղծ հիմնադրամին փոխանցված միջոցներն ուղղվել են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամին՝ պարտքով, վերադարձնելու պայմանով: Խոսքն ահռելի՝ մոտ 300 մլն դրամի մասին է: Նշենք, որ Հակոբյանը մինչեւ մարզպետ նշանակվելը եղել է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության ադմինիստրատիվ տնօրեն եւ նույն ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ: ՀՀ պետական սեփականություն հանդիսացող հիմնադրամի միջոցներից առանց կառավարության որոշման մեկ այլ՝ մասնավոր հիմնադրամի գումար փոխանցելը, նկատենք, օրենքի խախտում է: Ըստ նույն այդ հրապարակման՝ 300 մլն դրամը՝ փոխանցված «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ԲՀ-ին, հնարավոր է՝ ուղղվել է նախկին մարզպետի ընտանիքին պատկանող, մարզպետի տիկնոջ՝ էլիզաբեթ Պետրոսյանի կողմից ղեկավարվող «Հանրային դիվանագիտություն» հասարակական կազմակերպությանը:

slaq.am

Նա զրուցում էր բոլորի հետ՝ յուրովի



Սպարտակ Բակունցի մասին մեծն Համո Սահյանը գրել է. **«Զարմանում ես, որ նա իր կենդանության օրոք ոչ մի տող չի տպագրել: Մինչդեռ տպագրության արժանի շատ գործեր ուներ, որ կարող էին պատիվ բերել ոչ միայն հեղինակին, այլեւ գրական 60-ականներից հետո հրապարակ եկած բանաստեղծական ամբողջ սերնդին: Երեւի ինքն իր նկատմամբ շատ պահանջկոտ է եղել եւ եղել է երիտասարդական փառասիրություններից հեռու: Կամ էլ ինչ իմանաս, կյանքում եղել է տաղանդավոր մարդ, կարողացել է իրեն այնպես դրսեւորել, որ օգնել է մարդկանց, թեթեւացրել նրանց կյանքն ու ստեղծագործությունը համարել է հավելյալ մի բան: Այս է հաստատում նրա կենսագրությունը: Կարեւորը նրա համար եղել է լինելը, քան երեւալը:**

Նա է շունչը ժամանակի,
Ով, ընկնելով մարտի դաշտում,
Պատմությունն է կերտում ազգի,
Պատմության մեջ հիշվելով լոկ որպես զինվոր,
Թե նա, ով իր տաքուկ բնում՝
Ազգի շահը դրոշ արած,
Կործանման է տանում ազգին՝
Հանուն շահի»:

Եվ Համո Սահյանը խորհուրդ է տալիս՝ **«Կարդա այս գիրքը, սիրելի ընթերցող, այնտեղ կգտնես մեր օրերի ողբերգության, դժվարությունների, հիասթափությունների եւ այդ բոլորը հաղթահարելու մեր ժողովրդի պատրաստակամության բանաստեղծական պատկերը...»:**

Սյունիքի գրողների միությունում են նաեւ Սպարտակ Բակունցի կինը, երեխաները, եղբայրը, հարազատներ, ընկերներ, միության անդամներ: Ներկաները, ինչպես Խաչիկ Հայրապետյանն ու Արկադի Ծատուրյանը, արժեւորեցին Սպարտակ Բակունցի ստեղծագործությունները, ցավ ապրեցին, որ «Հայացքների պայքար» գիրքը եղավ Սպարտակի առաջին ու... վերջին գիրքը: Թշնամու հրետակոծությանը զոհ գնաց Սպարտակը՝ չտեսնելով տպագրված իր գիրքը: Իսկ նրա բանաստեղծությունների ժողովածուն տպագրության պատրաստեց եղբայրը՝ Արմիկ Բակունցը:

-Ցավս մեղմելու միջոց էր Սպարտակի բանաստեղծությունների ժողովածուի տպագրությունն ինձ համար: Ու նաեւ եղբայրական պարտք: Այս գիրքը նույնպես նրա ժառանգն է, նրա երեխան:

Սպարտակ Բակունցի հարազատները շնորհակալություն հայտնեցին Սյունիքի գրողների միությանը՝ Սպարտակ Բակունց մարդ-բանաստեղծին հիշելու- մեծարելու-գնահատելու համար:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Մտավորական Խաչիկ Հայրապետյանը հենց այսպես էլ ասաց.

- Սպարտակ Բակունցը կարողանում է մտնել ընթերցողի հոգին՝ անկախ արծարծած թեմայից: Նա ասես զրուցում է ընթերցողի հետ եւ այդ զրույցը պարտադրանք չէ, բռնազբոսիկ չէ:

Եվ չես վիճում Խաչիկի հետ: Կարդալով Սպարտակ Բակունցի բանաստեղծությունները, զգում ես, որ Խաչիկի ասածն աքսիոմա է: Սպարտակ Բակունց բանաստեղծի մոտ մտքի տեղատարափ է, եւ յուրաքանչյուր միտք արժեք է, եւ արժեքն այդ բանաստեղծությունը դարձնում է մարդահամ եւ կարդում-կարդում ես ու ամեն բանաստեղծություն դառնում է կյանքը ճանաչելու բանալի: Այսինքն՝ Սպարտակ Բակունցի բանաստեղծություններն իրական կյանքի վավերագրեր են, արտացոլանք միտք- բառ-հայելու մեջ:

«Սպարտակ Բակունցը փիլիսոփայաբար մտածելու հատկություն ունի: Թեմաների ընտրության հարցում էլ նա բացառիկ է: Նա քննում է ոչ միայն երեւույթը, այլեւ ասես մտնում դրա ներսն ու տեսնում դրա էությունը, գույները: Նրա բանաստեղծությունների թեման բազմազան լինելով հանդերձ, բայց եւ այնպես նրա թեման հիմնականում մարդն է, մարդագիտությունը, չարի ու բարու պայքարը: Եվ Հիսուս Քրիստոսը նրա համար մարդկության կողմից ստեղծված ամենաբարի կերպարն է: Եվ նա յուրաքանչյուր մարդու մեջ ուզում է տեսնել Քրիստոսի հատկանիշներից գոնե մեկը»,- գրող Արկադի Ծատուրյանի խոսքերն են:

Ասել է թե՝ Սպարտակ Բակունց բանաստեղծը մարդուն տեսնում է յուրովի՝ իր առաքելությամբ: Իսկ այդ առաքելությունը պիտի լինի իր նմանին սիրելը, պատվելը:

Սպարտակ Բակունցը ծնվել է Գորիս համայնքի Վերիշեն բնակավայրում: Ավարտել է Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը: Աշխատում էր Գորիսի գյուղվարչությունում՝ գլխավոր տնտեսագետ: Ստեղծագործել սկսել է պատանեկության տարիներից:

Նոր հիմնադրամ՝ «Անմահ հերոս»

Հուլիսի 8-ին Կապանի Ալ. Շիրվանզադեի անվան պետական դրամատիկական թատրոնում տեղի ունեցած միջոցառման շրջանակում ստեղծվեց «Անմահ հերոս» հիմնադրամը, որը նպատակ ունի աջակցել Արցախյան գոյամարտում եւ ապրիլյան պատերազմում հաշմանդամ դարձած ազատամարտիկներին: Հիմնադրամի ստեղծման միջոցառմանը մասնակցում էին ՀՀ ԱԺ պատգամավորներ Էդմոն Մարուքյանը եւ Հայկ Կոնջորյանը: Հիմնադրամի տնօրեն, ապրիլյան պատերազմի մասնակից Թաթուլ Ծատրյանի փոխանցմամբ՝ նախ նպատակ ունեն օգնության ձեռք մեկնել նրանց, ովքեր ծայրահեղ աջակցության կարիք ունեն, իսկ ընդհանրապես հիմնադրամի տեսադաշտում են լինելու մերօրյա ազատամարտին մասնակից ազատամարտիկները: Միջոցառման ավարտին մասնակիցները եղան Բաղաբուրջի հուշահամալիրում եւ հարգանքի տուրք մատուցեցին զոհված ազատամարտիկների հիշատակին:

«Սյունյաց երկիր»

Հայտարարություն

Կապանի պետական բժշկական քոլեջը հայտարարում է 2018-2019 ուս. տարվա ընդունելություն՝ միջնակարգ եւ հիմնական կրթության հիմքերի վրա՝ անվճար եւ վճարովի հիմունքներով ուսուցման տեղերի համար՝ **«Քույրական գործ», «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ» եւ «Բուժական կոսմետոլոգիա»** մասնագիտությունների գծով:

Միջնակարգ կրթությամբ դիմորդների համար «Քույրական գործ» մասնագիտությամբ ուսման տեւողությունը 3 տարի է, իսկ հիմնական կրթությամբ դիմորդների համար՝ 4 տարի: «Դեղագործություն», «Ատամնատեխնիկական գործ» եւ «Բուժական կոսմետոլոգիա» մասնագիտություններով ուսման տեւողությունը միջնակարգ կրթությամբ դիմորդների համար 2 տարի է, իսկ հիմնական կրթությամբ դիմորդների համար՝ 3 տարի: Շրջանավարտները ստանում են համապատասխանաբար՝ բուժքրոջ/բուժեղբոր, դեղագործի, ատամնատեխնիկի, բուժքույր/բուժեղբայր կոսմետոլոգի որակավորում: Ուսուցումը առկա է /ստացիոնար/, հայերեն լեզվով, «Դեղագործություն» մասնագիտությամբ միջնակարգ կրթությամբ դիմորդների համար կա նաեւ հեռակա ուսուցում՝ տեւողությունը՝ 3 տարի:

Կապանի պետական բժշկական քոլեջի շրջանավարտները դիպլոմներ ստանալուց հետո կարող են անմիջապես անցնել աշխատանքի ինչպես հանրապետության, այնպես էլ արտասահմանյան բուժհաստատություններում /քոլեջի ավարտական դիպլոմը ճանաչվում է ԱՄՆ-ի բոլոր նահանգներում, ԱՊՀ-ի բոլոր երկրներում, եվրոպական մի շարք երկրներում/:

Բարձր առաջադիմությամբ շրջանավարտները կարող են ուսումը շարունակել բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ 2-րդ կուրսում՝ հեռակա ուսուցմամբ:

Քոլեջ կարող են դիմել նաեւ նախնական մասնագիտական, միջին մասնագիտական եւ բարձրագույն մասնագիտական կրթություն ունեցող անձինք:

Քոլեջում ընդունելությունն իրականացվում է կենսաբանություն առարկայի ընդունելության /բանավոր/ քննության արդյունքների հիման վրա:

Քոլեջում դիմորդների փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2018թ. օգոստոսի 13-ը, աշխատանքային օրերին ժամը 9.00-16.00:

Դիմորդը քոլեջի ընդունող հանձնաժողովին անձամբ, իսկ անչափահաս լինելու դեպքում օրինական ներկայացուցչի /ծնողի, որդեգրողի կամ հոգաբարձուի/ հետ ներկայացնում է՝

դիմում,
կրթության մասին փաստաթղթի բնագիրը,
4 լուսանկար /3Х4 սմ/,
անձը հաստատող փաստաթղթի բնագիրը,
տեղեկանք առողջական վիճակի մասին (ձեւ N086/ու)
տեղեկանք բնակատեղից:

Կցագրման վկայական / զորակոչային տարիք ունեցող դիմորդից ընդունվում են զին. հաշվառման փաստաթղթերում տարկետման իրավունք տվող համապատասխան նշումի կամ զորակոչվելու հաստատող այլ նշումների առկայության դեպքում, իսկ նախկինում առողջության պատճառով տարկետում ունեցողներից՝ Հանրապետական զորակոչային հանձնաժողովի նշումների առկայության դեպքում/:

Դիմորդն ընդունելության գործընթացի կազմակերպման եւ անցկացման համար քոլեջում նախապես վճարում է 1000 / մեկ հազար/ ՀՀ դրամ:

Քոլեջում ընդունելության քննություններն անց են կացվելու օգոստոսի 16-18-ը քոլեջում:

Ընդունելության մրցույթի արդյունքները հրապարակվում են տվյալ մասնագիտության մրցույթի արդյունքների ամփոփումից հետո:

Հիմնական կրթության հիմունքով վճարովի համակարգում սովորողներն առաջին տարում կվճարեն 170.000 դրամ, մնացած տարիներին համապատասխան վարձավճարների չափով:

Վարձավճարի չափերն են՝

0913.02.5 «Քույրական գործ - 220.000դրամ,
0916.01.5 «Դեղագործություն» - 220.000 դրամ
0911.01.5 «Ատամնատեխնիկական գործ»- 230.000 դրամ,
0915.01.5 «Բուժական կոսմետոլոգիա»- 230.000 դրամ:

Քոլեջ ընդունված դիմորդի հետ կնքվում է համապատասխան պայմանագիր:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել քոլեջի ընդունող հանձնաժողովին:

ՀԱՍՑԵՆ՝ ք. Կապան, Շահումյան 37ա
Հեռախոս՝ 5 25 70, 094 45 99 36

Մեծանուն մարդուն՝ գեներալ-լեյտենանտ Մուրազ Սարգսյանին

Խորը վշտով ցավակցում եմ որդուդ եւ բոլոր ձեր հարազատներին՝ դժբախտ պատահարից ողբերգականորեն կյանքից հեռացած թանկագին էմիլիայի մահվան առիթով:

Ձեզ պատուհասած ցավը ծանր է, կորուստը՝ անդառնալի, վիշտը տանելը՝ դժվարին:

Ժորա Մանուկյան

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

QR-ԿՈԴ

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1200, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 12.07.2018թ.: